

13354

ՕՐԻՆԱԿ

ՎԵՐԱՎԵՆՈՒ

ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ


(ՊԵՐՍԻԿԱ ԱՐԱԿՐԵԱԾ)

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱՑ

ԴԵՐԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՅ

Տպագրեալ

1870





542
-23

ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Ի ԹԱԳԱԿՈՐՈՒԹԵԱՆ

ՍՈՒԼՔԱՆ ԱՎՏ-ԲԻԼ-ԱԶԲՋ ԲԱՆՔՆ

ԿԱՅՍԵՐ ՕՍՄԱՆՑԻՈՑ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

S. S. Գ. Ե Ո Ր Գ Ա Յ Գ .

ԱՍՏՈՒՄԱՐԵԱԼ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

2001

— 600 —

Ի ՊԱՏԻԱՐՔՈՒԹԵԱՆ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԵՄԻ

S. ՄԿՐՏՉԻ ԽՐԻՄԵԱՆ

ԱՐՁԻ ԵՊԻՄԿՈՊՈՍԻ

2001

ԵՐԿՐՈՐԴ ՎԵՐԱԲԵՆՆՈՒԹԻՒՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԵՄ

— 1870 —

25246.4.3.


ՄԵՐԱԲԾՈՒ
ՅԱԴՎԱՐԱԳՐԱԿԱՆՈՒՄ

ԺԱՄԱՆԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՆԴԱՐՆԱՇԱՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Պատրիարքական կնքով ըստ վաւերացեալ
օրինակաց հշտութիւնուն երաշխաւորեալ չ'է-

Պատրիարքական պահպանության

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՐԱԳԱՎԱՐ



438556

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՐԱԳԱՎԱՐ

Պատրիարքականում

ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ՕՍՄԱՆՑԻ ՀԱՅՈՑ

Ա յա րո՞ւ մարմելացին միշարքը ։ Ե պատրաս պամարքը
մարմելացին առօսական կայսերական բաժինը
անդր ք մարմելացին առօսական բաժինը միշարքը
ո նոյն ք մարմելացին առօսական բաժինը միշարքը
ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿՂԲՈՒՆՔ այս այլ
մարմելացին առօսական բաժինը արագ բանից
- ինը բայց ո առօսական բաժինը արագ բանից
Ա.

Բարձրագոյն Դրան չնորհած արտօնութեանց համար
ձայն՝ Հայոց ազգային վարչութիւնը եւսփոռաւական է,
ամեն ժամանակ եղածին պէս, թէ իր կրօնական մասին
մէջ և թէ կրօնականէն կախեալ իր քաղաքական մասին մէջ,

Բ.

Երեսփոխանական վարչութիւնը իրաւանց ու պարտեաց
սկզբանց վրայ հիմնեալ է, որ արդարութեան սկիզբն է.
Իր ուժը ձայնից բազմութեան մէջ կը կայանայ որ օրինաւորութեան սկիզբն է :

Ամենայն տնօրէնութիւն երեսփոխանական վարչութեան
որ աւելի կամ պակաս շեղի այս սկիզբներէն, այնչափ կը
հեռանայ արդարութենէ և օրինաւորութենէ :

Գ.

Սոյն սկզբանց զօրութեամբ՝ որք աւանդական են Հայաստանեայց Եկեղեցւոյ մէջ, հայերը մէջերնին հաւատրենց իրաւանց վարչութեանն առջեւ թէ իրենց իրաւանց և թէ
իրենց պարտեացը մէջ :

Պ.

Փոխադարձ պարտեօք կապված են իրարու Աղջն ու
Աղջային վարչութիւնը :

ՅՈՅՈՒՅՈՒՆ ԵՎ ՄԱՍԱԿ

Աղջայնոց պարտքն է՝ Աղջային վարչութեան հոդոց և
ծախից մասնակից ըլլալ իւրաքանչիւր ըստ կարօղութեան :
աղջային բարեկարգութեան ու բարեկեցութեան դործա-
կից ըլլալ՝ Բարոյականին ցուցած և Տէրութեան դրած օ-
րինաց քաղաքակրթապէս հնազանդելով, և վարչութեան
տնօրէնութիւնը աղջասիրապէս յարգելով :

Զ.

Վարչութեան պարտքն է՝ արդար և օրինապէս վար-
վել աղջային սնօրէնութեանց մէջ և հայրաբար ընդ աղ-
ջայինս, մանուկին՝ մանչ թէ աղջիկ՝ հաւաար տալով ան-
հրաժեշտ դիտելիքը, և տնանկին՝ պատսպարան . Հայաս-
տանեայց Եկեղեցւոյ դաւանութիւնն ու աւանդութիւնքը
անխախտ պահելու հսկել . աղջային հաստատութեանց
բարեկարգութեանն ու պայծառութեանը հոդ տանիլ .
աղջային հասքն ու ծախքը իմաստութեամբ տնտեսել .
Աղջին կրօնական և քաղաքական իրաւանց ու արտօնու-
թեանց պահպանութեանը համար թ. Դրան հովանոյն
դիմել, և հաւատարիմ ծառայել Աղջին և Տէրութեան :

Է.

Սոյն աղջային վարչութեան մէջ իւրաքանչիւրին իրա-
ւունքն ու պարտիքը ուղղելու տենչանօք, Հայոց ժողովը՝
նախանձաւոր բարոյական բարեկարգութեան, կ'ենթարկէ
զայս սահմանադրութիւնը՝ յանուն համօրէն աղջին, վսեմ
հաճութեան բարձրագոյն Դրան և հայրախնամ վճռոյն իւր
օդոստափառ վեհապետին կայսերն օսմանցւոց :

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Ա. Զ. Գ.

1. — Հայ ազգը Թուրքիոյ մէջ օսմանցի հայերու կողմէն ընտրեալ ընդհանուր ժողովով մը կը ներկայանայ, գլուխն ունելով Պօլսի Պատրիարքը՝ նոյն իսկ ժողովին ընտրեալ և կայսերական հրովարտակով հաստատեալ:

Սոյն ազգային ժողովին միջնորդութեամբը կը վարէ Ազգը ազգային վարչութեան վրայ իր հեղինակութիւնը:

2. — Ընդհանուր ժողովը՝ բարոյապէս պատասխանատու, ազգային վարչութեան օրէնսդրական մասն ու ընդհանրական խնդրոց վերջին որոշումն իրեն պահելով, գործադրական մասը՝ համարատութեան պայմանով՝ իր ընտրած երկու ընդհանուր խորհուրդներու կը յանձնէ, Պատրիարքին պատուակալ նախագահութեամբը: Կրօնական գործոց վարչութիւնը՝ կրօնական խորհուրդի մը, և քաղաքական գործոց վարչութիւնը՝ քաղաքական խորհուրդի մը: Խառն գործերը իրաւամբ կու գան խառն խորհուրդի մը որ այս երկու խորհըրդոց պատահապէս մէկտեղ գալովը կը ձեւանայ:

ՊԱՏՐԻԱՐՔՈՐԾՆ կ. ՊՈԼՍԻ

3. — Պօլսի պատրիարքարանը ազգային վարչութեան կեդրոնն է, և Պատրիարքը՝ օսմանցի հայոց պաշտօնական հոգեւոր պետն է, իբրեւ ներկայացուցիչ կաթողիկոսին ամենայն Հայոց, և միանդամայն միջնորդ է հեղինակութեան Բ. Դրան՝ Ազգին հետ ունեցած յարաբերութեանցը մէջ:

Պատրիարքը կեղրոնական վարչութեան ժողովին և խորհրդոց գործադիր իշխանութիւնը կը վարէ, և պատասխանատու է Ազգին և Տէրութեան առջեւ։

4. — Պատրիարքական ընտրելին պիտի ըլլայ ծնեալ հպատակ օսմանեան և եպիսկոպոս ձեռնադրեալ Մ. Աթոռէն Արարատեան կամ անկէ ընդունված, և իր վարքովն ու ձիրքերովը արժանաւոր հանգիսացեալ Ազգին և միանդամայն Բ. Դրան համարման ու վստահութեանը։

5. — Պատրիարքը կ'ընտրվի ըստ ընտրական օրինաց (96) ընդհանուր ժողովին բոլոր անդամոց քրւէից բացարձակ բազմութեամբը այն հինգ անուանց մէջէն, զորոնք խառն խորհուրդը՝ քննութեամբ քաղելով Եկեղեցական ժողովին կողմէն առաջուց իրեն տրված ընդհանուր ընտրելեաց ցանկէն (1), իր քննութեան ու նկատօղութեանց տեղեկադրովը կը ներկայացնէ ժողովին։

Երեսփոխանք աղատ են քրւէնին այս ցանկին վրայ ալ տարածելու, որն որ ի տես դրված պիտի մնայ ժողովին մէջ քրւէարկութեան օրը։ Իսկ սոյն ցանկէն դուրս քրւէ չ'ընդունուիր իր։

Սուլթանը կայսերական հրովարտակով կը հաստատէ Պատրիարքին ընտրութիւնը, և կաթողիկոսն իր առաքելական օրհնաբեր կոնդակովը զանի կը նուիրագործէ։

Եթէ ընտրեալը վարդապետ է, եպիսկոպոս ձեռնադրվելու համար յէջմիածին կը դրկվի։

6. — Պատրիարքը իրեն խորհրդական փոխանորդ մ'ունի որ կ'օդնէ անոր իր պաշտօնին մէջ և զանի կը փոխանակէ անոր բացակայութեան տուեն։

(1) Տես 20 յօդուածին ծանօթութիւնը։

Այս պաշտօնեայն ընդհանուր ժողովին կ'ընտրվի Պատրիարքին տուած և խառն խորհրդով պատրաստած եռանուն ցանկի մը վրայ :

7. — Պատրիարքին պաշտօնն է՝ ընդհանուր խորհրդոց դործակցութեամբ Ազգին դործերը տնօրինել և զանոնք Սահմանադրութեան տրամադրութեանցը համաձայն դործադրել :

Իր պարտքն է մանաւանդ հսկել Սահմանադրութեան կանոնաւոր և անթերի կիրառութեանը բոլոր ազգին մէջ :

8. — Պատրիարքը իրեն եկած ամեն գործ ձեռնհաս խորհրդոց պիտ'որ յանձնէ, խառն խորհուրդ ալ գումարելով ըստ հարկին, և անոնց որոշմանը համեմատ պիտ'որ դործադրէ :

9. — Պատրիարքը իրաւունք ունի դիտողութիւն ընելու և իր պատճառաբանութիւններովը հանդերձ երկրորդ քննութեան դարձնելու խորհուրդի մը որոշումը զոր անհամաձայն համարէ Սահմանադրութեան ոգւոյն :

Եթէ խորհուրդը պնդէ իր առաջին որոշման վրայ, և Պատրիարքը չը գոհանայ տրված փաստերէն, ընդհանուր ժողովին դիւանին ալ խորհուրդն առնելէն ետքը, ժողովին կը դնէ ըզ խնդիրը որ զանի վերջնապէս կը լուծէ և Պատրիարքին ու խորհուրդին միջեւ ծագած անհամաձայնութիւնը կը բառնայ :

10. — Պատրիարքը ամբաստանութեան կը դրվի եթէ Սահմանադրութեան հակառակ ընթացք բռնէ կամ իր պարտեաց կատարմանը մէջ անփոյթ մնայ :

Ամբաստանութեան իրաւունքը ընդհանուր խորհուրդներուն է, կամ ընդհանուր ժողովին դիւանին և կամ երեսփոխանաց, և կը վարվի ընդհանուր ժողովին առջեւ միայն որ իր մէջէն ընտրեալ յատուկ յանձնախումբի մը ձեւ

ուօք զամբատանութիւնը քննել տալով և դրօք իմակելօք դատելէն ետքը՝ իր վճիռը կու տայ դաշտնի քըւէով և բացարձակ առաւելութեամբ իր բոլոր անդամոց (96^ր) :

Ժողովին կողմէն տժգոհութեան քըւէ հրաժարում կը հարկադրէ ամբաստանեալ պատրիարքին։ — Եթէ ընդդիմանայ հրաժարելու, Ընդհանուր ժողովը Բ. Դրան կը մատուցնէ իր որոշումը և կը խնդրէ պատրիարքին պաշտօնան կութիւնը։

11. — Երբոր պատրիարքական աթոռը թափուր մնայ վախճանի կամ հրաժարի պատճառով, պատրիարքական պաշտօնը անոր փոխանորդին կամ յատուկ տեղապահի մը ձեռօք կը վարվի՝ ըստ որոշման Ժողովին, մինչեւ ցընտրութիւն նոր պատրիարքի։

12. — Կրօնական խորհուրդը պաշտօն ունի Ազգին կրօնական գործերը հոգալու, և կը բաղկանայ 12 կրօնադէտ եկեղեցականներէ։

13. — Այս խորհուրդին ատենապետը եպիսկոպոս մընէ Ընդհանուր ժողովին ընարեալ՝ Պատրիարքին տուած և Ընդհանուր ժողովին եկեղեցական անդամոց հետ խորհըրդակցութեամբ պատրաստած եռանուն ցանկի մը վրայ ։ Ըստրեալ ատենապետ կամ խորհըրդապետը՝ Պատրիարքին և Ընդհանուր ժողովին եկեղեցական անդամոց հետ խորհըրդակցելով 22 անուամբ ցանկ մը կը պատրաստէ, որոյ մէջէն ժողովին ընտրութեամբ կ'որոշէ մնացած 11 անդամները և խորհուրդին կազմութիւնը կը լրացնէ (1)։

(1) Երեսփոխանք ազատ են այս ցանկերէն դուրս ալ քըւէ տալու։

Այս խորհըրդապետին և անդամոց անունները Պատրիարքը կը ներկայացնէ թ. Դրան որ պաշտօնէապէս կը հաստատէ զանոնց ընտրութիւնը :

Ա 4. — Կրօնական խորհըրդապետը զայս խորհուրդը կը բաժնէ երեք մասի, վարչութեառնեան մաս, քարենարդունեան մաս, ողօրէնունեան մաս, իւրաքանչիւր մասը 3 կամ 4 անդամներէ բաղկացեալ որոցմէ մէկը մասնապետ կարդեալ է խորհըրդապետէն : Ճ Եւ ինք պարաւոր է Ազգին կրօնական գործոց տարեկան ընդհանուր համարատութիւնը մատուցնել ազգային ժողովին :

Ա 5. — Վարդապետութեան մասին պաշտօնն է՝ կրօնական ուսուցման վրայ հսկել և ղանի Հայ Եկեղեցւոյ գաւանութեանն ու վարդապետութեանց համաձայն ուղղել, ձեռնադրութեան մատօնմերը քննել և արժանութեան վիճակի տալ, և մանաւանդուսեալ, բանիքուն և արժանաւոր ընծայեալներ հասցնելու զբաղիլ :

Ա 6. — Բարեկարդութեան մասին պաշտօնն է՝ Եկեղեցեաց և Եկեղեցական արարօդութեանց բարեկարդութեանը հսկել . մանաւանդ քահանայից վիճակին բատ ամենայնի հոգ տանիլ, և անոնց կացութիւնը բարւոքելու և ապագան անդորրելու ամենայն ջան ի գործ դնել :

Ա 7. — Տնօրինութեան մասին պաշտօնն է՝ քննել և տնօրինել ամենայն կրօնական գործ որ վերցիշեալ մասանց պաշտօններէն դուրս կը դտիլի :

Ա 8. — Կրօնական մասնախորհուրդը աղաստօրէն կը գործ ծեն իւրաքանչիւրն իր մասին մէջ՝ խորհուրդին հաւանութիւնն առնելին ետքը, և ուղյամպէս համարատու են խորհուրդին ինչպէս խորհուրդը համարատու է ժողովին : X

Ա 9. — Կրօնական խորհուրդին պարտաւորութենէն է անաշառապէս հսկել որ ոչ ոք կարենայ ձեռնադրութեան

մատչիլ վասքորական գաւառին կամ Պօլսի վիճակին մէջ առանց հրամանի պատրիարքի, որն որ պէտք է խնդըրված ըլլայ այն եկեղեցւոյ կողմէն որում ընծայեալը սպասաւորել կուզէ և ձեռքն ունի կրօնական խորհուրդէն տրված արժանութեան վկայագիրը ⁽¹⁾ :

20. — Ամենայն կրօնական խնդըրի համար զոր խորհուրդն իր ձեռնհասութենէն վեր դատէ, Պատրիարքէն պիտի խնդըրէ եկեղեցական ժողով գումարել ⁽²⁾ : Եթէ այս ժողովն ալ անձեռնհաս զինքը համարէ, կրօնական խորհուրդը կըմիածնայ Ս. Աթոռին պէտք է դիմէ պատրիարքին միշնորդութեամբը :

21. — Կրօնական խորհուրդը ամեն երկու տարին կը լուծվի, և ենոյ անդամները վերընտրելի են : Եթէ վախճան կամ հրաժար պատահի խորհուրդին մէջ, ընդհանուր ժողովը պակսող անդամին փոխանակութիւնը կը հոգայ ըստ տրամադրութեան 13 յօդուածին :

(1) Սոյն խստութիւնը հարկ է որ պահեն նաեւ գաւառաց կրօնական խորհուրդները եւ առանց հրամանի առաջնորդի՝ ձեռնադրութիւն չըլլայ ընդդէմ արամադրութեան սոյն յօդուածին :

(2) Պօլսի եւ շրջակայ եկեղեցեաց մնջաւորներուն եւ աւագեաքեցներուն մէկտեղ գալովը կը ձեռանայ Պօլսի եկեղեցական ժողովը, ուր կը հրաւիրվին նաեւս պաշտօնուլ կամ պատահամբ ի Պօլս գաւօղ եպիսկոպոսք : — Այս ժողովը Պատրիարքին կամ փոխանորդին հրաւէրովիր ու նախագահութեամբը կը գումարվի ընա հարկին .

Պատրիարքական ընտրելեաց ընդհանուր ցանկը շնորհու համար ո՞րն որ պիտի պարունակէ ըստ 4 յօդուածին ընտրելու թեան համագամանքն ունեցող ամեն եպիսկոպոսաց ու վարդապետաց անունները :

Է Նրբոր կրօնական խորհուրդն իրեն վիմէ :

ՔԱՂԱՔԱԿՑԵ ԽՈՐՀՅՈՒԹԻ

Զ 2. — Քաղաքական խորհուրդը պաշտօն ունի Ազգին քաղաքական գործերը հոգալու , որը են անոր դաստիարակութեանը , գործեանը , համարակալութեանը ու յաբերութեանը :

Այս խորհուրդը 12 քաղաքագէտ աշխարհականներէ կը բացկանայ , և իր պաշտօնին տարրեր ճիւղերուն համեմատ չորս տարրեր մասերու կամ յատուկ մասնախորհուրդներու կը բաժնվի , իւրաքանչիւրը բաղկացեալ 3 ձեռնհաս անդամներէ որոցմէ մէկը մասնագետ է պատասխանատու և միւս երկու քը անոր խորհըրդակից օգնականները :

Զ 3. — Ուսումնական մասնախորհուրդին յատուկ պաշտօնն է՝ մայրաքաղաքիս ազգային Ուսումնարանին մատակարար տնօրէնութիւնը , և ազգային դաստիարակութեան ընդհանուր վերատեսչութիւնը :

Պարտաւորութիւն ունի հոգ տանիլ որ ամեն թաղ իր նախնական ուսմանց դպրոցն ունենայ կանոնաւոր ուսմանց ընթացքով , թէ մանչ և թէ աղջիկ մանկանց համար , ինչպէս և ամեն գաւառագլուխ քաղաք երկրորդական ուսմանց յատկացեալ իր ազգային ուսումնարանը :

Զ 4. — Ծնտեսական մասնախորհուրդին յատուկ պաշտօնն է՝ մայրաքաղաքիս ազգային Պատասխարանին մատակարար տնօրէնութիւնը , և ազգային հաստատութեանց ու կալուածոց ընդհանուր վերատեսչութիւնը :

Պարտաւորութիւն ունի հոգ տանիլ որ ազգային շենքերն ու կալուածքը բարգաւաճութեան մէջ գալիքն , և ազգային ամեն տեսակ հաստատութիւն՝ պատսպարան , վանք , առաջնորդարան , պատրիարքարան , կաթողիկոսարան եւայլ , իր յատուկ հաստատային կանոնադրութիւնն ունենայ իրմէ շինված և ձեռնհաս հեղինակութենէն վաւերացեալ , և ըստ այնմ վարվի . պիտ'որ հոգայ մանաւանդ որ վանորայք Ազգին մէջ տղիտութեան ու թշուառութեան

դէմ պատսպարան ըլլալու մարդասիրական իրենց վսեմ
նպատակը աչքէ չը կորումնեն, և չնա+ ըսելով Ազգը՝
վարժոց ու անկէլանոց միեւնոյն յարկի տակ համենայ . պիտ'որ
խնամ տանի նաեւ Ազգին անուանը եղած կտակաց և տրոց
զի ասոնց արդիւնքը իրենց նպատակէն չը շրջին: Սոյն տեսա-
չութեան հոգն է նաեւ ջանալ ամեն կերպով որ ամեն արք-
եպիսկոպոսական գաւառ. իր շրջանակին մէջ ազգային պա-
տրապարան մ'ունենայ ծեր կամ հիւանդ աղքատաց համար:

25. — Համարական մասնախորհուրդին յատուկ պաշ-
տօնն է՝ ազգային սնառութին տնօրէնութիւնն ու պահպանու-
թիւնը, և ազգին ելից ու մարդ ընդհանուր տեսչութիւնը:

Պարտաւորութիւնն է՝ մնառուկին հաշիւը կանոնաւոր հա-
մարակալութեան սկզբանց համաձայն բունել, ամենայն հաս-
ու ծախ ստուգիչ թղթով վաւերացեալ ցուցնել, տարեկան
պիւճէն պատրաստել և սնառուկին հաշուեկանը պէտք ե-
ղած ատեն հրաժարակել, և մանաւանդ ազգային ծախքը
խմառուն խնայութեամբ թեթեւյնելու իննամբ տանիլ:

26. — Յարաբերական մասնախորհուրդին յատուկ պաշ-
տօնն է՝ Բ. Դրան հետ, Ա. Աթոռին հետ, միւս պատրի-
տրքարանայ հետ, առաջնորդարանաց և դաւառական
վարչութեանց հետ Ազգին ունեցած յարբերութեանց և
պահպահած գործոց տնօրէնութիւնը:

Պարտաւորութիւնն ունի գաւառաբնակ ազգայնոց վի-
ճակին ըստ ամենայնի հոգ տանիլ, և գաւառաց մէջ ազգա-
յին Սահմանադրութեան կիրառութեանն օժանդակ ըլլալ:

27. — Յարաբերութեանց մասնապետը միանդամայն Քա-
զաքական խորհուրդին առենապետ կամ խորհրդապետն է,
և իր ընարութիւնը սոյն մակրով կը հաստատի Բ. Դռնէն:
Այս խորհրդապետին ընտրութեանը համար Վատրի-
արքը՝ Ըսդհանուր ժողովին դիւանին հետ խորհրդակցե-
լով, սոյն պաշտօնին ձեռնէհաս և յանձնառու անձանց եռա-
լով,

նուն ցանկ մը կը ներկայացնէ . որոյ մէջէն քըւէարկութեամբ կ'ընտրէ ժողովն ըզխորհըրդապետը⁽¹⁾ :

Յ 8. — Մասնապետաց ընտրութեանը համար պատրիարքն ու նորընտիր խորհըրդապետը՝ Ընդհանուր ժողովին դիւանին հետ խորհըրդակցելով, երեք մասնախորհուրդներուն համար ձեռնհաս ու յանձնատու անձանց երեք ցանկ կը պատրաստեն երեքն ալ եռանուն, և Ընդհանուր ժողովը երեք զատ քըւէարկութեամբ կ'ընտրէ ամեն մէկ ցանկն իւրաքանչիւր մասնապետն իր մակդրովը⁽¹⁾ :

Յ 9. — Խորհըրդակից օդնականաց ընտրութեանը համար չորս մասնապետները Պատրիարքին հետ խորհըրդակցելով, մէյմէկ քառանուն ցանկ կը պատրաստեն իւրաքանչիւրն իր մասին համար, և ժողովն ընտրութեամբ կ'առնու ամեն մէկ ցանկէն երկու անուն, և ասով թէ խորհուրդին բաղկացումը և թէ անոր մասնախորհուրդներու բաժնանումը միանդամայն կը լրացնէ : — Ընտրեալ խորհըրդապետին և անդամոց անունները Պատրիարքը Բ. Դրան կը ներկայացնէ որ զանոնց պաշտօնէութիւնը կը հաստատէ :

Յ 10. — Մասնախորհըրդոց ամեն անդամները՝ մասնապետ թէ խորհըրդակից՝ խորհուրդին մէջ հաւասար են, և խորհուրդին ամեն արարքներէն հաւասարապէս համարատու Ընդհանուր ժողովին առջեւ . իսկ առանձին դործոցութեանց մէջ անձնիւր մասնապետ պատրաստանատու է թէ խորհուրդին և թէ ժողովին առ ջեւ :

Յ 11. — Խորհուրդը չը պիտ'որ որոշէ իրեն ներկայացեալ խնդիր մը ձեռնհաս մասնախորհուրդին գննութեանը չը դրած և անոր յայտնած դատումէն դուրս . և զամենայն խնդիր զօր խորհուրդն իր ձեռնհասութենէն վեր դատէ, ժողովին պիտ'որ առաջարկէ :

(1) Երեսփոխանք ագատ են այս ցանկերէն դուրս ալ քըւէ տալու :

32. — Մասնախորհուրդը ձեռնհաս և մասնապետք համարատու՝ իւրաքանչիւրն իր մասին, ազատապէս կը գործեն սովորական խնդրոց մէջ, և իրենց աշխատութեանց բովանդակը միայն կը ներկայացնեն խորհուրդին։

Իսկ երբոր նոր կարգադրութիւն մ'ըլլայ, ծանր խնդիր մը կամ խառն այսինք քանի մը մասնախորհը ըրդոց միանդամայն վերաբերելի, և վերջապէս այնպիսի պարագայից մէջ ուր մասնապետ մը հարկ համարի իր պատասխանաւտութիւնը խորհուրդին հեղինակութեամբը ծածկելու, խորհը ըրդապետին կը դիմէ և խորհուրդին գումարումը կը խնդրէ իր առաջարկութիւնը ներկայացնելու համար։

Նմանապէս խորհը ըրպապետը նոյնպիսի պարագայից մէջ ձեռնհաս մասնապետաց հետ կը խորհը ըրդակցի կամ ըստ հարկին մասերն ի խորհուրդ կը գումարէ։

33. — Քաղաքական խորհը ըրդապետը պիտ'որ հսկէ որ մասնախորհուրդը աշխատին՝ իւրաքանչիւրն իր տեսչութեան սահմանին մէջ, և զանցառութիւն չ'ըսեն իրենց պարտեացը մէջ։ — Եւ ինք պարտաւոր է Ազգին քաղաքական գործոց տարեկան ընդհանուր համարատութիւնը մատուցնել ազգային ժողովին։

34. — Բաց ի մասնապետներէն, Քաղաքական խորհուրդը կը լուծվի ամեն երկու տարին և ենօղ անդամները վերընարելի են։

Պարտազանցութեան ամբաստանութիւն միայն կրնայ ընկենու լ մասնապետները պաշտօնէ։ Ընդհանուր ժողովը՝ միակ գատաւոր սոյն դիպուածին մէջ, կ'ըմբռոնէ կամ կ'ընկենու իր քըւէովը զամբաստանեալ մասնապետը։

35. — Եթէ վախճան կամ հրաժար պատահի խորհուրդին մէջ, ընդհանուր ժողովը անյապաղ կը հոգայ պակսող անդամին փոխանակութիւնը ըստ 27, 28 կամ 29 յօդ։

ԴԱՏԱՐԱՆ

Յ 6. — Պատրիարքարանը ընդհանուր դատարան մ'ունի որոյ պաշտօնն է կրօնական և քաղաքական գործոց վեճական կամ դատական մասը քննել և դատել. եւս և թաղերէն ի պատրիարքարան զրկված ազգահամարի կամ ընկերական վիճակի վերաբերեալ գործերը տնօրինել, որք են ամենայն ընտանեկան յարարերութիւնք, նշանտուք, հրամանտուք, ամուսնութիւն, ժառանգութիւն եւայլ:

Դատարանը նախագահ ունի պատրիարքին փոխանորդը և կը բաղկանայ 6 ձեռոնհաս անդամներէ որոց 3 ը եկեղեցական և 3 ը աշխարհական՝ իրենց պատշաճ խորհուրդներէն ընտրեալ: Այս անդամները ամուսնացեալ անձինք պէտք է որ ըլլան և 40 տարեւոր գոնէ:

Յ 7. — Դատարանն իր դատմանց մէջ առաջնորդ ըլլունելով՝ կրօնական մասին՝ նախնեացմէ աւանդեալ Եկեղեցւոյ կանոնները, և քաղաքական մասին՝ Տէրութեան դատարանաց արդի կանոնները, պիտ'որ ջանայ հակառակորդներն արդարութեամբ իրաւախոհ ընելու: Եւ իր ձեռոնհաս տութենէն վեր դատած խնդիրը պիտ'որ զրկէ խորհըդոց մէկին կամ խառն խորհուրդին ըստ ձեռնհասութեան:

Յ 8. — Դատարանէն դատեալ անձ մը իրաւունք ունի խորհրդոց մէկին կամ մէկալին կոչելու ըստ պահանջման պարագային:

Յ 9. — Դատարանը կը լուծի ամեն երկու տարին և ելնող անդամք վերընարելի են:

Վախճանի կամ հրաժարի պատահից մէջ պատշաճ խորհուրդը խոկոյն կ'ընտրեն պակասող անդամին փոխանակը:

ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

ԱՊ. — Կապահանքնեա . Բողոք ազգին Երեսփոխան՝ ազգային ընդհանուր ժողովը 100 անդամէ կը բաղկանայ . 20 Եկեղեցական ու 40 աշխարհական՝ Պօլսի թաղական ժողովներէն ընտրեալ , և 40 աշխարհական՝ գաւառական ժողովներէն ընտրեալ :

Ժողովին մէջ այս անդամները ոչ թէ ղերենք ընտրող թաղին կամ գաւառին Երեսփոխանքը կը համարվին , այլ Ազգին Երեսփոխանքն են համազօր պատգամաւորութեամբ ու համակշիռ պատասխանառութեամբ ամենքն Ազգին առջեւ : Ուստի հարկ չը կայ ամենեւին որ այս կամ այն թաղին կամ գաւառին բնակիչներէն ըլլան , բաւական է որ ի Պօլսի բնակին ուր կը բաղմի ընդհանուր ժողովը , և օսմաննեան հպատակ ըլլալով՝ ընտրելութեան պահանջած դրական ու ժխտական պայմաններուն պատասխաննեն (66) :

ԱՅ. — Դաստիարակութեան . Ծնորող ժողովներու իրարու մէջ Երեսփոխանաց բաշխումը պարզ ու հաւասարական դասակարգութեամբ մը կը կատարվի ըստ բնական բաժանման թաղից ու գաւառաց :

Թաղերը Պօլսի մէջ Երկու կարգ բաժնուած են գրեթէ հաւասար բազմամարդութեամբ , բնակչութեան և չորսորեան այսինք պարսպին ներսիններն ու գրահնները . ուստի իւրաքանչիւր կարգի 20 աշխարհական , ու 10 Եկեղեցական Երեսփոխան կ'ընկնի : Նմանապէս արմենաքնակ գաւառներն Անատոլիոյ մէջ Երկու հաւասար կողմ զատված են աշխարհագրապէս և գրեթէ հաւասար բազմամարդութեամբ , հիւրեանցն և հարաբեկն , իւրաքանչիւրը 10 գաւառ պարունակելով . ուստի իւրաքանչիւր կողմի 20 , և իւրաքանչիւր գաւառի 2 Երեսփոխան կ'ընկնի . (տե՛ս վերջի դասակարգութեան ցուցակը) :

Ասով՝ բոլոր երեսփոխանք քամանաւոր է բնական կարգերու մէջ հաւասարապէս բաշխեալ կը դասաւորվին, և կեդրոնէն դէպի շրջանակը համբելով Եկեղեցականք 1² կարգ կը կազմեն, թիւզանդեանք 2դը, վոսքորեանք 3դը, չիւսիսայինք 4դը, և Հարաւայինք 5դը:

ԱՅ. — Ըստրութիւնն. Երեսփոխանաց ընտրութիւնը կ'ըւլայ իւրաքանչիւր դաւառական և թաղական ժողովի մէջ էնքիս երկապատիկ անուամբ ներկայացման ցանկի մը վրայ, զոր դաւառներու մէջ՝ դաւառական ժողովին դիւանը կը պատրաստէ Ս.ռ.աշխորդին և դաւառական խորհրդոց հետ խորհրդակցութեամբ, և իւրաքանչիւր ժողով իր դաւառին 2 երեսփոխանը կ'ընտրէ իր առանձին ցանկին վրայ. իսկ թաղերու մէջ իւրաքանչիւր կարգին իր թաղակցար կը պատրաստէ⁽¹⁾, և նոյն կարգին ժողովները զատ զատ քըւէ.

(1) Թաղակոյտ կը կազմէ իւրաքանչիւր թաղական կարգ իր մայր թաղին (^(*)) մնեաւորին ձեռօք՝ իր ամեն մէկ թաղէն 3 հազի առնելով. Եկեղեցւոյ մնեաւոր կամ աւագերէցը, ժողովակետնու թաղակետը:

Ահճանագրապէս որոշեալ ժամանակին (48) Պատրիարքին հրաւերով թաղակոյտը կը դումարիի իր մայր թաղին մէջ եկեղեցւոյ մնեաւորաց բարձրաստիճանին նախագահութեամբը, և օրինապէս յասեան կը բազմի ժողովապետաց երիցագոյնին առենանապետութեամբն ու թաղակետաց կրտսերագոյնին առենադպրութեամբը:

“ Մէյմբ՝ երեսփոխանական ընդունեաց օանէ պատրաստելու համար, որոյ մէջ ամեն ժողովապետ՝ իր երկու թաղակցացը հետ համարիոն յանուն իր թաղին մէկ անուն գրելու իրաւունք ու նի, եւ նաացածը ամենուն ընտրանոքը լրանալով՝ օրինակը թաղական ժաղովոց կը դրկիլի:

Բ. Մէյմալ ընդհանուոր +ըւէնամար ընելու համար:

Գ. Երբ եւ ինչ ընդհանուոր հրահանգի մը համար Պատրիարքարանը հարկ տեսնէ:

(*) Թիւզանդեան կարգին Մայր-թաղը Քուժականակը մայր եկեղեցին է, և Վոսքորեանինը ներա է բայց այս թաղակոյտը Դաշնութիւն եկեղեցին կը դումարիի:

արկութեամբ միեւնոյն ցանկի վրայ կ'ընտրեն իրենց կարգին 20 աշխարհական կամ 10 եկեղեցական երեսփոխանը մէկէն, և իւրաքանչիւրն իր քըլէհամարի արդիւնքը թաղակոյտին կը դրէ որ զանոնք միացնելով ընդհանուր քըլէհամար կ'ընէ և ընտրութեանց վերջին արդիւնքը կը հռչակէ (74):

Ժողովականք ազատ են այս ցանկերէն դուրս ալ քըլէտալու :

Թաղակոյտ թէ գաւառական ժողովմեր Պատրիարքին կ'ուղերձեն ընտրեալ երեսփոխանաց անունները որ զանոնք ընդհանուր ժողովին կը ներկայացնէ, և ընդհանուր ժողովը՝ նոյն ուղերձներէն տեղեկանալով, ստուգութեամբ կը վաւերացնէ երեսփոխանաց ընտրութիւնը :

Եթէ մէկը քանի մը թաղի կամ գաւառի կողմէն միանգամանին ընտրեալ ըլլայ, իրեն է որոշել որ թաղին կամ գաւառին երեսփոխանութիւնն ընդունելը. Եթէ ինքը չ'ուզէ կամք յայանել, ընդհանուր ժողովը վիճակով կ'որոշէ : — Սոյն պարագային մէջ Պատրիարքը իմաց կու տոյ միւս ընտօղ ժողովին որ ուրիշ երեսփոխան մ' ընտրէ :

43. — Պաշտօն . ընդհանուր ժողովը պատղամ ունի յաշնուն Ազգին ընտրելու Եկեղեցւոյ աւագ աստիճանաւորքն ու Ազգին վերին պաշտօնեայքը, Ազգային վարչութեան օրինական ընթացքը գծելու և անկէ համար պահանջելու, կեդրոնական պիւճէն սահմանելու և ազգային հանդանակութիւնը քըլէարկելու, և վերջապէս իր հեղինակութեանը ենթարկեալ ազգային հանրական խնդիրները վճռաբար լուծելու :

Ընդհանուր ժողովին պարաւառութիւնէն է ազգային Սահմանադրութիւնը պահպանել, անոր հիմնական սկզբանը յարգել և իր գնացքը անոնց ոգւոյն ու տրամադրութեանցը համաձայնել :

44. — Համօրէն ազգին առջեւ բարոյապէս պատասխա-

նատութեան պայմանը կը պահանջէ որ՝ ընդհանուր ժողովին արարքն ու որոշմունքը մասնութիւնամբով լիցու ընծայվին:

45. — Բայց ընդհանուր ժողովը կը բացվի և կը գումարվի քանի անդամ՝ որ պէտք ըլլաց:

ա՝ կանոնաւորապէս ամեն տարի գարնան մէջ, ընդհանուր վարչութեան համարատութիւնը մտիկ ընելու և անոր պիտին սահմանելու համար. և երկու տարին անդամ մը յատիսապէս՝ իր անդամոց մասնակի և ընդհանուր խորհրդոց ամբողջակի վերանորոգմանը համար:

բ՝ Պատահապէս, կաթողիկոսի և պատրիարքաց ընտրութեան համար (1), ընդհանուր խորհրդոց պակաօղ անդամոց վոխանակութիւնը հոգալու համար, Սահմանադրութեան վերաբննութեանը և այլ ամենայն կարեւոր խնդրի համար որոյ որոշումն իրեն անկէ ըստ Սահմանադրութեան:

Ժողովին ամեն առաջին բացմանը համար յառաջադոյն ձանօթութիւն պէտք է արվի Բ. Դուան՝ օրն ու պատճառն իմացնելով, և ժողովը բաց կը մնայ մինչեւ որ պատճառ եղող խրնդիրները լուծվին:

46. — Դիւանին հետյառաջադոյն բանակցելով և պէտք եղածը տնօրինելով՝ Պատրիարքը կը հրաւիրէ սովորապէս զընդհանուր ժողովը՝ անոր դիւանին կամ խորհրդոց մէկին կամ միւսին ուղելովը և կամ իր կողմէն, կամ թէ Բ.

(1) Պատրիարքաց ընտրութիւնը միօրինակ կը կատարէ Ընդհանուր ժողովը ըստ ընտրական օրինաց (96). բայց միայն ընտրելու պատրիարքը որ տեղին է նէ նոյն կողմէն կը տրվի ընտրելիս ցանկը. զոր օրինակ Երուսաղէմայ պատրիարքին ընտրելիս ցանկը նոյն միաբանութեան կողմէն՝ ըստ հաստատացին կանոնադրութեան Երուսաղէմայ վանից:

Դրան հրամանովը եթէ պատրիարքը և իր փոխանորդը
մերժեն, ուղղապէս կը հրաւիրվի ժողովս իր առենապե-
տէն :

47. — Վերանորոգում : Ընդհանուր ժողովը մնայուն է,
և իր անդամոց կարգով հանված մէկ հինգերորդովը ամեն
երկու տարի փոխելով՝ տաս տարւոյ մէջ բոլորովին կը նո-
րոգվի : Ենօղ անդամք վերընտրելի են :

Խւրաքանչիւր քանաւոր կարգ իր դասական կարգովը
փոփխակի և ամբողջապէս կը նորոգվի, թէեւ ժամանակը
լրացած կարգին մէջ շատ մ'անդամներ՝ պակսօղ անդամ
ներ փոխանակելու համար՝ քիչ ատենէ ի վեր ընտրված
ըլլան ⁽¹⁾ :

48. — Ժողովին այս մասնակի վերանորոգմանը համար,
ամեն երկու տարին որոշեալ ամսի մը մէջ (զոր սրինակ առ-
քել) զբնորող ժողովները յընտրութիւն հրաւիրելու համե-
րաշխապէս պարտաւոր են Պատրիարքն ու ընդհանուր խոր-
հուրդները : Եմանապէս և երբոր վախճանի կամ հրաժարի
պատճառով բոլոր ժողովէն 10 անդամ կամ դաւառի մը 2
երեսփոխանքը մէկն պակսին :

(1) Տես 72 յօդուածին հրաճանակը որ եւ առա կիրառելի է ըստ
ամենայնի, նույնական բառը՝ կերպուական բառի փոխելով :

— բայց պատճեն ով բանձրութիւն զավեճաբարակ (1)
ամբ մասի բայց (2) բանձրի մաքնարաց ուոյ ցիրուն դաւառ
ամբ միզու ով մշերաք բայց առաջարկութիւն ու ցցրախրան արդի
ուոյ միջարտիքաց առ իրաւոց բանձրոյ դոք ցիրուն ցամյա
միջասաւառ ուոյ մշերաք մասի առաջարկ միուն ցիրուն ցամյա

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԳԱԻԱՌԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

զանք գումարո՞ւ մականուցաբ բայս իցնենաս բանց
դուք բարդոցնուի և միջրապատճենալու և շը բզնիառայ
դաշնութ մինարանցն . Հյան ու ցմանելումատիչ վարած
ու ուժ միւսաւար նման **Գ.Ս.Լ.Ա.Ռ.** զմանելումամբ միզ
ու օ չ աստանայսասար և **Կ.Ա.Մ.** զմանելու ողձազալ նայմ
ու ու առանելու ուշուն մայնուց ու մամարանունիւն միւսա
ու ու ու ու

ԱՌԴՃՆՈՐԴՈՒԹԻՒՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱԿՈՆ

մի ոգ ու զայ մասոյ մասոյ մասոյ մասոյ մասոյ (թէ) բանից մամաց
Ա.Յ. — Գաւառակերը կը ներկայանան իւրաքանչիւրը՝ գաւառցոց կողմէն ընտրեալ գաւառական ժողով մը , գը-
լուխն ունելով՝ գաւառին առաջնորդ Արքեպիսկոպոսը՝
նոյն իւկ ժողովէն ընտրեալ , Պատրիարքէն կարգեալ և բ.
Դունէն հաստատեալ : — Ոյն ժողովին միջնորդութեամբը կը հակէ իւրաքանչիւր գաւառո իւր առանձին մատակարա-
բութեանը վրայ :

Գաւառական ժողովները՝ բարցյալքէս պատասխանատու ,
գաւառին ընդհանուր խնդրոց որոշումն իրենց պահելով ,
սովորական գործոց վարչութիւնը համարատութեան պայ-
մանով կը յանձնեն իւրաքանչիւրն իր ընտրած երկու գա-
ւառական խորհուրդներու , կրօնական և քաղաքական ,
Առաջնորդին պատուակալ նախագահութեամբը և ազգա-
յին կեդրոնական վարչութեան ընդհանուր վերատեսչու-
թեանը տակ (1) :

(1) Գաւառական վարչութիւնը գրեթէ բատ ամենայնի կեդրո-
նական վարչութեան նախատիստին վրայ ձեւեալ է . մէկին արա-
մագրութիւնքը միւսինն ալ են . մէկին յօդուածքը միւսին ալ կը
պատշաճին , կեդրոնականին պատրիարքի , պատրիքարութեան , ուղարկեալ ու ու ու ու
հանուր ժողով բառերը՝ գաւառականին մէջ առաջնորդ , առաջնորդա-
բան , բառապատճեն եւ գուստառական ժողով բառերու փոխելով :

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆՔ

50. — Առաջնորդարանը գաւառագլխին մէջ գաւառական վարչութեան կերպոնն է, և Առաջնորդը՝ գաւառաբնակ օսմանցի հայոց պաշտօնական հոգեւոր պետը։

Առաջնորդը գաւառական ժողովին և խորհըրդոց գործադիր իշխանութիւնը կը վարէ։ միանդամայն Պատրիարքին հեղինակութիւնը կը ներկայացնէ գաւառին հետ ունեցած յարաբերութեանցը մէջ, և պատասխանատու է գաւառին միանդամայն և կերպոնական վարչութեան առջեւ։

Առաջնորդը կ'ընտրվի գաւառական ժողովին ըստ ընտրական օրինաց (96)՝ գաւառական խառն խորհուրդին ներկայացուցած ցանկին վրայ որ 3 անուն կը պարունակէ թէ որ կայ Յընտրելի բ. Պատրիարքն իր կոնդակովը կը հաստատեն նորընտիր առաջնորդին պաշտօնակալութիւնը (թէ ընտրութեան, թէ հրաժարման և թէ պաշտօնին վերաբերեալ պարագայից համար տես պատրիարքի վերաբերեալ բոլոր յօդուածները)։

ԳԱՒԱՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՔ

51. — գաւառական ժողովները կը բաղկանան իւրաքանչիւրը 50 անդամէ. 10 եկեղեցական ու 20 աշխարհական գաւառական ժամանակական ժողովներէն ընտրեալ⁽¹⁾, և 20 աշխարհական թեմական ժողովներէ ընտրեալ։

(Այս անդամոց բաշխման, գասակարգութեան և ընտրութեան համար, և թէ գաւառական ժողովոց ու խորհըր-

(1) Եթէ գաւառագլխի մը մէջ եկեղեցականաց թիւը չը բաւէ, գտվածիո չափ միայն կ'առալի թէ ժողովի եւ թէ խորհուրդի անդամ, պական աշխարհականերէ չը լցնելով։ (Տես նաեւ 64 յօդ ծան տրամադրութիւնք)։

ԳԼՈՒԽ ԵՐԵՌԵ

ԹԱՂԱԿԱՆ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ք. Ա. Բ. Ժ. Ը. Ա. Ա. Վ. Ա. Հ.

Թ. Ա. Ղ.

53. — Թաղերը կը ներկայանան իւրաքանչիւրն իր եկեղեցւոյ ժողովուրդէն ընտրեալ թաղական ժողով մը, գլուխն ունելով եկեղեցւոյ Մեծաւորը կամ Աւագերէցը՝ նցն իսկ ժողովին խնդրանօքը Պատրիարքէն կամ Առաջնորդէն կարգեալ։ — Սոյն ժողովին միջնորդութեամբը կը հսկէ իւրաքանչիւր թաղ իր առանձին մատակարարութեանը վրայ⁽¹⁾։

Թաղական ժողովները՝ բարոյապէս պատասխանատու, թաղին ընդհանուր խնդրոց որոշումն իրենց պահելով, սովորական գործոց տնօրէնութիւնն ու թաղական հաստատութեանց հոգաբարձութիւնը՝ համարատութեան պայմանով՝ կը յանձնեն իւրաքանչիւրն իր ընտրած թաղական խորհուրդի մը, եկեղեցւոյ Մեծաւորին պատուակալ նախագահութեամբը և իր կեդրոնին ընդհանուր խորհրդոց վերատեսչութեանը տակ։

(1) Թէ մայրաքաղաքիս մէջ եւ թէ գաւառաց քաղաքներու եւ գիւղերու մէջ, ուր եկեղեցի մը կայ եւ բաւական ժողովուրդ ունի, թաղ կը կազմէ իր ժողովուրդովլը։ Եւ թաղական մատակարարութիւնը նոյն է եւ ընդհանուր ամեն տեղի համար։ Է՞ն քիչ 250 ընտրող կամ հանգանակօղ ունեցող եկեղեցին ընդհանրապէս բաւական համարլած է առանձին թաղ կազմելու՝ նիստ մատակարարութեան։ բայց այն եկեղեցին որ թէ հասոյթի եւ թէ ժողովուրդի քիչորութեան պատճառով անբաւական է ինքնին մատակարարմելու, կընայ եթէ արդելք մը չը կայ՝ մերձակայ եկեղեցւոյն հետ միանալով կազմել ամբողջ թաղ։

ԹԱՂԱՎԱՆ ԽՈՐՀՈՒՄՈՒՔ բանական
մօսաւոր ապահովագույն առաջարկ առաջարկ

54. — Թաղական խորհուրդները պաշտօն ունին հոգաց և իւրաքանչիւրն իր թաղին՝ եկեղեցւոյ և դպրոցի մատակարարութիւնը, տնտեսութիւնն ու առտեսին օգնութիւնները, ազգահամարի արձանագրութիւնքն ու ծագած վէճերու խաղաղարարութիւնը, կալուածական դործոց ու կտակաց տնօրինութիւնը, հանդանակութեան գըրտածքն ու հաւաքում կամքնեալումը, և հասից ու ծախից համարսկարութիւնն ու մատակարարութիւնը :

Փարտք ունի անհրաժեշտ ամեն թաղական խորհուրդ, նախ իր թաղին նախնական ու սմանց կանոնաւոր դպրոցն ունենալու թէ մանչ և թէ աղջիկ մանկանց համար, երկրորդ՝ իր թաղին ազգահարի երեք գիրքերն ունենալու, ծննդոց, պատկաց և վախճանաց, որոց մէջ ճշդիւ և ըստ կանոնի պիտօք արձանագրէ իր եկեղեցւոյ ժողովրդեան ամեն անհամերը արու թէ էգ, անունովը, մականուններնը, տեղումն ու թըրականովը. նմանապէս և հանդանակութեան տօմար մը որոյ մէջ կանոնաւոր կերպով պիտօք արձանագրէ թաղին բողոք հանդանակողները. երրորդ՝ ապրեցնել կրցածին չափ քահանայ պահելու և պահածներուն կացութիւնը կանոնաւոր ապրուատով մը արժանապէս բարւոքելու :

55. — Թաղական խորհուրդները 10 անդամէ կը բաղկանան. հինգ հոգաբարձու պատասխանատու՝ իւրաքանչիւրը մէջմէկ օդնականուլ. որք են՝ մէկ հոգաբարձու եկեղեցւոյ միանդամայն և տնանկաց, մէկ հոգաբարձու դըպրոցի, մէկ հոգաբարձու ազգահամարի կամ հօտար միանդամայն և իւրաւարար, մէկ հոգաբարձու կալուածոց և կը տակաց, և մէկ հոգաբարձու մնաուկի կամ համարսկալ⁽¹⁾:

(1) Այս անդամները անխստրապէս կրնան ըլլալ թէ քահանայէ

կալուածոց հոգաբարձուն միանգամայն խորհըրդապետ
է թաղական կամ թաղապետ, և իրեւ թաղապետ պաշտօն
ունի նաեւ՝ տեղական իշխանութեանց հետ, պատրիար-
քարանին և միւս թաղերու հետ թաղին ունեցած յարաբե-
րութիւնքն ու պատահած գործերը տնօրինելու :

56. — Ամեն թաղական խորհուրդ իր թաղական ժողովը
վէն կ'ընտրըվի անդամոց մակդիրը նշանակելով ըստ տրա-
մադրութեանց 27, 28 և 29 յօդուածոց, ներկայացման
ցանկի մը վրայ զոր Աւագերէցն ու ժողովին դիւանը խոր-
հըրդակցութեամբ կը պատրաստեն :

Պատրիարքը կամ Առաջնորդը իր կոնդակովը կը մեծա-
րէ անդամոց և թաղապետին ընտրութիւնը :

57. — Թաղական խորհուրդի մէջ ամեն անդամք հաւ-
ար են հոգաբարձու թէ օդնական, և խորհըրդով եղած
տնօրէնութեանց մէջ ամենքը հաւսարապէս համարատու
թաղական ժողովին առջեւ. իսկ առանձին գործոց մէջ
անձիւր հոգաբարձու պատասխանատու է թէ խորհուրդին
և թէ ժողովին առջեւ. (ՏԵ՛Ս 30, 31, 32, 33 յօդ. տրա-
մադրութիւնքը) :

58. — Թաղական խորհուրդ իրենց հոգաբարձութեան
գործոց ու թաղական մասնաւորութեանց մէջ աղասօրէն
կը գործեն, և մատակարարութեան հաշիւր ամեն տարի
իրենց ժողովոց վաւերացմանը ներկայացնելու պարտաւոր են.
իսկ դլսաւոր կէտերու մէջ կամ նոր ու կարեւոր կարգա-
դրութեան մը համար՝ ըստ պատշաճին պիտ'որ դիմեն կամ

իւ թէ աշխարհականէ. ըստ տեղւոյն եւ ըստ պատշաճին որ հո-
գաբարձուն կամ որ օդնականը քահանայէ կամ աշխարհականէ
ընելլը ընտրող ժողովին դդ օնութեանը թողված է :

իրենց ժողովոց կամ իրենց կեդրոնին ընդհանուր խորհրդոց
կամ մէ ասոնց ձեռնհաս մասնախորհրդոց, և սոյն տեսչու-
թեանց կողմէն տրված ընդհանուր հրահանդաց պիտ'որ Հետեւին :

Նոյնաբէս թաղական իրաւաբարը իր ձեռնհասութենէն
վեր եղած կամ իր խաղաղել չը կրցած վէճը իր կեդրոնին
ընդհանուր գատարանը պիտ'որ զրկէ հանդերձ իր քննու-
թեան տեղեկագրովը :

59. — Թաղական խորհուրդք ամեն երկու տարին կը
լուծվին, և ելնօղ անդամք իրենց հոդաբարձութեան վա-
ւերացեալ հաշիւր երկուստեք ստորագրեալ վիճակցու-
ցակով մը պիտ'որ աւանդեն մոնօղ անդամոց : Ելնօղ ան-
դամք վերընսորելի են :

Եթէ վախճան կամ հրաժար պատահի թաղական խոր-
հուրդի մէջ, թաղական ժողովն անմիջապէս կ'ընտրէ պակ-
սօղ անդամին փոխանակը :

թԱՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՔ

60. — Թաղական ժողովները կը բաղկանան իւրաքան-
չիւրը 25 անդամէ որոց 3ը եկեղեցական և 20ը աշխահա-
կան, զորոնք ուղղապէս ժողովները կ'ընտրէ և իւրա-
քանչիւր թաղ իր բնակչաց մէջէն⁽¹⁾ :

61. — Թաղական ժողովները պատղամ ունին յանուն
թաղին ընտրելու իւրաքանչիւրն իր կարգին ընկած աղդա-
յին երեսականները ընդհանուր ժողովին անդամ, իր թա-

(1) Եթէ թաղի մը չմէջ 5 եկեղեցական չը գտնի, դտուղները
իրաւամք անդամ են. պակասը աշխարհականներէ լցնելու իրա-
ւունք չը կայ:

զին խորհուրդն ընտրելու, պիտին սահմանելու և մատակարարութեան համարը պահանջելու, և իր ձեռնհասութեանը ենթադրեալ ամեն թաղական խնդիր լուծելու:

Թաղական ժողովոց պարտաւորութենէն է ազգային Սահմանադրութեան պահպանութեանը նախանձախնդիրը ըլլալ, և մանաւանդ թաղական մասակարարութեան մէջ անոր կանոնաւոր և անթերի կիրառութեանը հսկել:

62. — Թաղական ժողով կը դումբըրվի քանի անդամոր պէտք ըլլայ.

՝ Կանոնաւորապէս ամեն տարի գարնան ըսկիզբը, թաղական մատակարարութեան համարատևոթիւնը մտիկ ընելու և անոր պիտին սահմանելու համար . և երկու տարին անդամ մը յատկապէս՝ իր անդամոց մասնակի և թաղական խորհուրդին ամբողջակի վերանորոգմանը համար :

՝ Պատահապէս և ըստ հարկին, ընդհանուր ժողովին և թաղական խորհուրդին պակօղ անդամոց փոխանակութիւնը հոգալու համար, և այն ամեն թաղական խնդիրի համար որոյ լուծումը ժողովին հեղինակութենէն կախեալ է :

63. — Դիւանին հետ յառաջագոյն բանակցելով՝ եկեղեցւոյ Մեծաւորը կամ Աւագերէցը կը հրաւիրեն առվորապէս թաղական ժողովը՝ անոր դիւանին կամ թաղական խորհուրդին ուղելովը : Թէ որ չը կամին մեծաւորն ու աւագերէցը, ուղղապէս կը հրաւիրվի ժողովն իր ատենապետէն :

64. — Թաղական ժողովները՝ մէջ մ' ընտրվին, մնայուն են, և իւրաքանչիւրն իր անդամոց ամեն երկու տարի կարգով հանված մէկ հինգերորդովը փոփոխակի կը նորոգվի : Ենօղ անդամք վերընտրելի են :

Ժողովականը օհնդաւոր կարգի բաժանեալ, իւրաքա՞ն իւրն իր թշրւական կարգովը ամբողջապէս կը նորոգված է:

վի, թէեւ ժամանակը հասած կարգին մէջ քիչ ատենէ ի վեր ընտրվածներ գովին (1) :

65. — Ժողովին այս մասնակի և երկամեայ վերանորոգ մանը համար, եկեղեցւոյ լեծագերէցը և թաղական խորհուրդը՝ ընտրական գործօղութիւնները նախապատրաստելով, ամեն երկու տարի որոշեալ ամսի մը մէջ (զորորինակ ժամանակը) թաղացիները յընաբութիւն կոչելու համերաշխափէս պարտաւոր են: Նմանապէս և երբոր Յ էն աւելի վախճան կամ հրաժար պատահի ժողովին մէջ:

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԹԱՂԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԿԱՆԱՅ

66. — Ոմեն հայ իր թաղին մէջ ընտրութիւն է 25 տարեւոր և ընտրել 30 տարեւոր, անի որ կարգալ ու գրել գիտէ:

Զրկեալ է կամ արդեւեալ ընտրելու և ընտրվելու իրաւունքներէն անի որ գատաստանապէս զրկեալ է կամ արդիւեալ իր քաղաքական իրաւանց վայելումէն, կամ իր հոգեւոր պաշտօնէն՝ եթէ եկեղեցական է, կամ առ ազգային վարչութիւնն իր պարտիքը չէ կատարած (79):

Ոմենայն ընտրօղ և ընտրելի՝ իր իրաւունքն ըստ հարկին արդարացնելու համար, պէտք է որ իր համգանակազգին յետին եռամսեկը վճարեալ ու զերծ ներկայացնէ:

67. — Թաղական խորհուրդը՝ պահանջեալ պայմանները քննելէն ետքը, իր թաղին հանգանակօղաց ցանկէն քաղելով երկու տարբեր ընդհանուր ցանկ կը շինէ այբբենի կար-

(1) Եկեղեցական այսինք ն կարգը միաւն կրնայ հնգաւոր չըլլալ ու անփոփոխ մնալ, եթէ թաղի մը մէջ եկեղեցականաց գործութիւնը չը բաւել. և լուսարկէն այն ժողովին ամբողջակի նորոգումը լուսամակ տամակի 8 տարւոյ մէջ կը կատարվի, աշխարհական և կարգերը շարունակելով անընդմէջ իրենց երկամեայ շըրջանը. որոնք հաստատված օրէն առաջին ու մէկ անգամ իրան որ եւ է կերպով բաժնիած ու դաստարված են:

դով, ըստքնաց ջանի և ըստքելաց յանի, որոնք ի տես դրված պիտ'որ մասն եկեղեցւոյ մէջ քըւէարկութեան օրէն ութ օր դոնէ առաջ՝ բողոքի կամ սրբագրութեան դիպուածոց հա. մար⁽¹⁾։ — Ընտրողքը ընտրելեաց ցանկէն կ'առնուն իրենց հաւնած անունները ուղիւած թըւովը և իրենց քըւէթուղթին վրայ կը գրեն։

68. — Քըւէն դաղսնի է, ուստի անձամբ ներկայանալ չը կըցօղը կնքեալ և ստորագրեալ պահարանի մէջ ոէտք է որ զրկէ իր քըւէթուղթը, որ սա կանոնի և հետեւարար ընդունելի ըլլալու համար պէտք է որ ընդհանուր ընտրելեաց ցանկէն դուրս և ուղիւած թիւէն աւելի անուն չը պա. քունակէ և անունները ընթերցանելի և անշփոթելի կերպով դրված ըլլան, քըւէարկուին ստորագիրը պահարանին դուրսը կամ ներսը պէտք է որ ըլլայ և ոչ թէ քըւէթուղթին մէջ։

69. — Քըւէարկութեան օրն ու քըւէտուփին փակման ժամը՝ որ էն կանուխը կէսօրէն առաջ պիտ'որ չ'ըլլայ, ութ օր առաջ ամեն հնարին միջոցներով ծանուված ըլլալով թաղին մէջ, քըւէարկութիւնը կը սկսի եկեղեցւոյ մէջ առաւօտեան ժամերգութեան վերջը՝ եկեղեցւոյ Մեծաւորին կամ Աւագերէցին նախագահութեամբը նատած թաղական խորհուրդին առջեւ, և ներկայից մէջէն որոշված 4 կամ 6 քննիչներուներկայութեամբը, որոնք պիտ'որ գիտեն թէ քըւէարկուք իւրաքանչիւրը մէկէն աւելի քըւէթուղթ չը ձգեն տուփին մէջ և ղրկված պահարան մը մէկէն աւելի քըւէ-

(1) Թաղական խորհուրդն ազատ է՝ այս իրկու ընդհանուր ցանկին զատ, ներկայացման ցանկ մ'ալ շինելու ուղիւած ընտրելեաց կրկին թըւովը եւ զանի ալ ի տես զներու ի դիւրութիւն ընտրողաց. իսկ ընտրողքը ոչ մէկ կերպով պարագաներեալ են այս ցանկին հետեւելու. սակայն ընտրելեաց ընդհանուր ցանկին դուրս քըւէ չ'ընդունալիր։

թուղթ չը պարունակէ . միանդամայն պիտ'որ նշանակեն՝ բաղդատութեան համար՝ ընտրօղաց ցանկին վրայ քըւէարկուաց անունները :

Շ Օ. . — Քուէհամարը հարկաւորապէս նոյն օրը կը կատարվի (եթէ նիւթական արգելք մը չըլլայ) քըւէտուփին փակման ժամեն սկսեալ՝ միեւնոյն դիւանին և միեւնոյն քննիչներու ձեռօք , քըւէթղթոց կանոնաւորութիւնն ստուգելով և թիւը քըւէարկուաց թիւին հետ բաղդատելով , և քըւէարկութեան արգիւնքը կը հռչակվի :

Շ Ա. . — Առաջին քըւէարկութեամբ ոչ ոք ընարեալ է թաղական ժողովի անդամ եթէ չ'է ըստացած քըւէից բացարձակ առաւելութիւնը այսինք կէսէն աւելին : Եթէ առաջին քըւէարկութեամբ ուզված ընտրելոց թիւը չ'է լցված , երկրորդ քըւէարկութիւնը ուրիշ օր մը կ'ըլլայ միեւնոյն կերպով և ընտրական ընդհանուր օրինաց համաձայն (96) :

Շ Զ. . — Թաղական ժողովս իր առաջին նիստին մէջ՝ ընտրական գործօղութեանց օրինաւորութիւնը թաղական խորհուրդին տուած տեղեկագրին վրայ ստուգելով , ժողովականաց ընտրութիւնը կը վաւերացնէ (1) :

(1) Հընհանք . — Թաղական ժողովը՝ իր երկամեայ վերսմորոգման ստացին նիստերուն մէջ կարգով կը կատարէ իր երկամեայ գործօղութիւնը . ուր մանող անդամոց ընտրութիւնը վաւերացնելէն անսմիջապէս ետքը իր դիւանը կը նորոգէ , յետոյ թաղական մատակարարութեան համարատւութիւնը կը խնդրէ . եւ ապա նոր թաղական խորհուրդը կ'ընտրէ , որով եւ հինը կը լուծվի (59) :

Այս հրահանգը յարմարելի է նաև ամեն ժողովոց , թէ ընդհանուրին եւ թէ Գաւառականաց :

ԳԼՈՒԽ ԶՈՐԾՈՐԴԻ

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ



ԲՆԴՀԱՆԱԿԻՄ ԱԿՁԲՈՒՎՔ

Շ Յ. — Հանգանակութիւնը՝ ազգային ժամանց վճարման պարտաւորապէս մամնակցելու բնական և իրաւացի միջոցն է:

Ազգային հանգանակութիւնը իրաւացչ պահանջված է այն առենքն երբոր ըլլայ որդոր, որանելք, օրէնուոր և ապահովութեան ։

Ա. ԱՐԴԱՐ Է, նախ՝ երբոր վճարօղին կարօղութեանը վրայ շափված ըլլայ և ոչ թէ պահանջօղին պիտոյիցը վրայ՝ երկրորդ՝ երբոր կարօղութեան համեմատութեամբ հաւասար ըլլայ ամենուն ։

Այս սկիզբը պիտ'որ սահմանէ բաշխման հիմն ու պիւճէին գլուխները ։

Բ. ՏԱՆԵԼԻ Է, նախ՝ երբոր վճարօղին տարեկան շահին մէկ հարիւրորդը չ'անցնի, (ասկէ վարը նէթեւ սեպլիլով) ⁽¹⁾. երկրորդ՝ երբոր բաժիններով վճարվի. քանզի սկզբամբ թեթեւ եղող հանգանակութիւնը կրնայ վճարման եղանակով ծանրանալ, որպէս և փոխադարձապէս ։

Այս սկիզբը պիտ'որ տիրէ բաշխման ու վճարման եղանակաց վրայ ։

⁽¹⁾ Այս սկիզբը ընդունելի է յառկապէս մեր ազգին հանգանակութեանը մէջ, որ միայն հոգեւոր կամ վերջապէս հոգեւորէն միայն առթեալ աշխարհական պիտոյքներ ունի հոգալու, ինչպէս՝ պիտոյք եկեղեցւոյ, դպրոցի, վանորէից, եւ այն. եւ պէտք

Գ. ՕՐԻՆԱԿՈՐ Է Լիամ՝ ՀԱՅԵԱԼ, երբոք՝ անդու սկզբանց ու կիրաւութեանց վրայ օրինաւոր ատեանի մէջ կանոնաւոր քննութիւն ու բաւական վիճաբանութիւն ըլլալէն ետքը, ժողովի մը քըւէէն արտադրեալ ըլլայ և ոչ թէ հաճոյքէ մը հարկադրեալ։

Հոս ժողովին քըւէն՝ Աղգին կամքն ու հանդանակօղին հաճութիւնն առնված ըսել է։

Դ. ԱՊԱՀՈՎԵԱԼ, կը համարվի, երբոր անոր արդիւնքը՝ կանոնաւոր համարակալութեամբ ապահովեալ և խմաստուն խնայութեամբ կիրաւեալ, իր նպատակին ծառայած ըլլայ։

Տպված ու հանդանակօղաց աշացն առջեւ դրված ել մտական ճշգրիտ պատկեր մը կընայ զայն պայմանը լցնել և ստուգ ութեամբ ապահովել հաճեալ հանդանակութիւնը։

Այս ընդ հանուր սկիզբներէն սրչափի խոտորի մեր ազգային հանգանակութիւնը, այնչափ կը հեռանայ իրաւութենէ և հանդանակօղաց այնչափ դժկամութիւնն կը պատճառէ։

ԷՇ որ ամենեւին ազգային հանդանակութեան այս սկիզբը գոյաթակութիւն տայ մեր ազգայնոյ մերին՝ Տէրութեան պահանձած հանդանակութեանց մէջ, որոյ ընդհանրական պիտոյքը բազմապատիկ աւելի են քան ըզ մեր ազգային պիտոյքը, վասն որոյ Տէրութիւնը ոչ թէ միայն աւելի իրաւունքներ կ'ունենայ ուղղապէս մեր արքեկան շահին վրայ, այլ կը պարտաւորի անուղղակի զանազան հանգանակութիւններ բառեղծելով համաց աղբւրները բամբասպատկելու, ինչպէս մաքս, բաժ, հարկ և այլն, իր զանազան ծախսից դէմ երթալու և մեր բոլոր քաղաքական ընդհանուր պիտոյքը հողալու համար։ Աւատի լոկ հոդեւոր պիտոյքը հոդալու յատկացնեալ հանդանակութեան մէջ մէկ հարիւրորդէն վեր պահանջումը ծանր եւ անսամնելի է արդարեւ աղղային հանդանակօղաց որք միւս կողմէն Տէրութեան ալ հանդանակութիւններ ունին վճարելու իրենց միւս բոլոր նիւթական կամ աշխարհական պիտոյքը համար։

ԷՆԳՀԱՆՈՒՐ ԿԱՄ ՈՒՂՂԱԿԻ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ

ԹԱՇԽՈՒՄ

Չ 4. — Ընդհանուր հանգանակութիւնը ուղղավէս կը վճարիի ամեն ազգայիններէ և կանոնաւորապէս ամեն տարի ։

Բաշխման հիմ բռնված է դրամական կարօղութիւնը ։

Ամեն մարդու իր դրամական կարօղութեան չափը իր օրական շահն է, որ և ըլլայ ասոր աղքիւրը, աշխատութիւն, թոշակ, եկամուտ, խնայութիւն, եւայլն ըսել է իր տարեկան շահին 3634 մասը ։

Ընդհանուր հանգանակութիւնը աղղային ծախից երկու տարբեր պիտեհներու դէմ գալու ըլլալով՝ կեդրոնական և թաղական, ոյս միօրեայ չափը պիտո՞ր կրկնվի և ներկայացնէ երկու օրական շահ, (մէկ օրական՝ թաղին յատկացեալ, և մէկ օրական՝ կեդրոնին), որոյ գումարը կը ձեւացնէ տարեկան շահին 1824 մասը ։

Չ 5. — Ամենայն անհատ աղղային որ շահի տէր է պարտաւոր է տարին իր երկօրեայ շահը Աղղին ընդհանուր ծախից և իր թագին մասնաւոր ծախից վճարման հանգանակ տալու ։

Չ 6. — Զը կայ իշխանութիւն որ իւրաքանչիւրին համար կարօղութեան այս չափն որոշելու և արդար բաշխում մը ընելու ձեռնհաս ըլլայ, բայց բարոյական իշխանութիւն մը զոր իւրաքանչիւր ոք յինքն կը կրէ, իր խիղճն է ուստի հանգանակաց բաշխման չը կայ ուրիշ եղանակ այլ բարոյական եղանակ մը որ հանգանակօղաց ցանկի մը վրայ տողագրութեամբ կը կատարիլի ։

Այս ցանկին վրայ՝ զոր իւրաքանչիւր թաղական խորհուրդ իր թաղին հանգանակօղաց կը ներկայացնէ, իւրաքանչիւր հանգանակօղ իր օրական շահին կը կինը իր խղճին

մէջ հաշւելէն ետքը, իր կարօղութեան համեմատ դա-
տած տարեկան հանդանակը կը սոսորագրէ :

Ստորագրեալ հանդանակը կ'ըլլայ որբազան պարտ մը որ
խիզճ ու պատիր դրաւի կը դնէ ⁽¹⁾ :

ՎՃԱՐՈՒՄ

Չ 2. - Եճարումը երկու պայման կը պահանջէ, ժամա-
նակի և առաջնորդեան :

Ժամանակի պայմանը կը լցվի եռամսեկան վճարմամբ,
և առաջնորդութեան պայմանը ուղղակի վճարմամբ որ կը կա-
տարգի թաղական մնառ կին անձամբ կամ հաւատարիմ միջ-
նորդով մը մերձենալով, որ համարակալն ու հանդանա-
կողը դէմ առ դէմ գալով իրարու ընկալագիր կու տան,
մէկը հանդանակութեան տոմսակն ստորագրելով և միւսը
հանդանակութեան տօմարը, և իրարմէ կ'ըլլան դերձ :

Չ 3. - Հանդանակողը կը վճարեն իւրաքանչիւր իր թա-
ղին մնառ կին, և իւրաքանչիւր թաղական մնառ կ իր թա-
ղին ընդհանուր հանդանակութենէն յառաջ եկած բովան-
դակ գումարը կիսւակէս կը բաժնէ կեդրոնական մնառ-
կին հետ. (74, 75) :

Չ 4. - Ամենայն արդարութենէ է՝ որ պարտքէն բա-
ժին չ'առնօղը իրաւոնքէն ալ բաժին չ'ունենայ. ուստի
առանց անկարօղութեան պատճառի ազգային հանդանա-
կութիւնը մերժօղը պարտազանց է Ազգին առջեւ, և իր-
ուր ըմբռառ ընդդէմ բարոյական արդարութեան՝ արդիւ-
եալ է իր ընորական իրաւանց մէջ :

(1) Ստորագրեալ հանդանակը անցեալ երկու տարեաց շահե-
րուն վրայ հաշւեալ ենթագրելով կրնայ դօւցէ երկու տարի ան-
փոփոխ մնալ. իսկ երկու տարին անդառ մը այ ցանկը նորէն պէտք
է որ ներկայացի հանդանակողաց որպէս զի կարենա: ըստ հար-
կին չափաւորել իրենց հանդանակը ըստ նոր կարօղութեան թէ
վեր կամ թէ վար :

ՄԱՍՆԱԿՈՐ ԿԱՄ ԱՆՈՒԴՐՈՒՆ ՀԱԳՄԱՍԻՈՒԹԻՒՆ

Ց Օ. — Մասնաւոր հանգանակութիւնը անուղղապես կը պահանջի իրաւունքի մը վրայ և մասնաւորապէս զանի վայելողէն :

Այս հանգանակութիւնը հիմնեալ է թաղական հաստատութեանց մասնաւոր իրաւունքներուն վրայ, որոնք չորս կարդ են՝ չորս կարդ հաստատութեանց յատկացեալ եւենից ամեն եւեղեցեաց համար, ու պահպահուն իրաւունքն ու պարունակաց համար, ու իրաւունքն ու դիւանատանց համար :

Այս իրաւունքները՝ բատ կարօղութեան վճարված ըլլալու համար, ընդ հանուր հանգանակութեան աստիճանաց վրայ չափված պէտք է ըլլան բատ մեծի մասին գոնէ :

Ց Ա. — Եկեղեցական իրաւունքը կը կայանան ժամանակի, ամուսնութիւն և մատուցութիւն վրայ :

Ց Յ. — Ծնունդի վրայ եկեղեցւոյ իրաւունքը կը գոյանաց երախային հօրը և կնքահօր կողմէն որոց իւրաքանչիւրը իր տարեկան հանդանակին կէսին չափ գումար կը վճարէ :

Եւ յետոյ երախան կ'արձանագրվի ազգահամարի ծննդոց գերքին մէջ ուր կը ստորագրեն ծնողք, կնքահայրն ու մլուտող քահանայն, և ծննդագիրը կը արվի :

Ց Յ. — Պատկի վրայ եկեղեցւոյ իրաւունքը կը դպանայ վեսային, հաղափն և կնքահօր կողմէն գիտային ու հարսին կողմէն իր ծնողքը և իւրաքանչիւրն իր տարեկան հանգանակին կը գումար, և կնքահայրն իր գումարը կը վճարէ, և կնքահայրն իր գումարը կը արվի :

Եւ յետոյ պսակեալք կ'արձանագրվին ազգահամարի պսակաց գիրքին մէջ ուր կը ստորագրեն պսակեալք, կընքահայրն ու պսակօղ քահանայն, և պսակագիրը կը տրվի։

Տ 4. — Վախճանի կամ թաղման վրայ եկեղեցւոյ իրաւունքը կը գոյանայ վախճանելցն տարեկան հանդանակին կրկին գումարէն զոր ընտանիքն անոր գոյքէն կը վճարէ։ Եթէ վախճանեալը հանդանակ չ'ունի, (կին է կամ մանուկ), ընտանեաց պետը կը վճարէ իր հանդանակին հաւասար գումար։

Եւ յետոյ վախճանեալը կ'արձանագրվի ազգահամարի վախճանաց գիրքին մէջ ուր կը ստորագրեն տան քահանայն ու քանի մը բարեկամք, և վախճանագիրը կը տրվի⁽¹⁾։

ԴՊՐՈՑԱԿՈՆ ԻՐԱՒՈՒՆՔ

Տ 5. — Դպրոցական իրաւունքը կը կայանան ուսմանց սիստան, շարուածակունեան և աւարտման վրայ։

Ուսմանց վրայ դպրոցի իրաւունքը կը գոյանայ աշկերտին ծնօղաց տարեկան հանդանակէն, որոյ հաւասար գումար կը վճարվի սկսած տարին, և նոյն գումարին կէօք ամեն տարի քանի որ ուսմունքը շարունակին։ Զբասած կ'իւմացվի որ հանդանակ չ'ունեցուին գաւակը ձբի կ'ումնի։

Ուսմանց աւարտումը վիսցագրով մը կը պսակվի որպէս իրաւունքը հաւասար է ամեն աշկերտաց համար, (զոր օրինակ 30 դրաւ նախնական ուսմանց համար)։

(1) Եկեղեցւոյ հասարակ արարօդութիւնքը՝ թէ պսակի եւ թէ թաղման, միօրինակ կը կատարվին՝ առանց հանդանակաց աստիճանին նայելու՝ առենք աղքայնոց համար նաև անկարօդաց եւ ըմբուտից համար (79)։ Խակ արտաքոյ կարգի հանդիսաւոր արարողութիւն պահանջօղը պէտք է վճարէ արտաքոյ կարգի գումար՝ իր հագանակէն դուրս, պահանջած հաղիսաւորութեան ասափհանին համեմատ։

զիսման որու անունը պահանջան գործառակ բառել ու
ԶԵՌՆԱՏՐԱԿԱՆ ԻՐԱԼԻՈՒՆՔ

Ց 6. — Ձեռնտրական իրաւունքը կը կայանան կէս մը
պատրիարքական վրայ և կէս մը կալուածական քննուց ու Հանձու-
թուց և ժառանգութեանց վրայ :

Ց 7. — Ամուսնութեան վրայ ձեռնտրութեան իրաւուն-
քը կը գոյանայ շահուուց և հրամանուուց առիթներավ, որք
պատրիարքական կամ առաջնորդական իշխանութեան առ-
ջնու կը կատարվին իրը նախարան կամ քաղաքական մասն
ամսն մնութեան, որոյ եկեղեցական մասը սեղանին առջեւ
պասկի խորհրդավը կը կատարվի :

Նշանատուքի վրայ՝ իբրեւ ձեռնարութեան իրաւունքը
աղդային պատսպարանին, նշանիերոց իւրաքանչիւրին կող-
մէն իրենց տարեկան հանգանակին հաւասար գումար կը
վճարվի կեդրոնական մնաւուկին, նոյնին գումարը
հրամանատուքի ատեն:

Ց 8. — Ամենայն կալուածական գնման ու վաճառման
վրայ որք կեդրոնական կամ թաղական դիւսնատան միջ-
նորդութեամբ կատարվին, սակարդեալ գինին վրայ հարիւ-
րին մէկ կը վճարեն կեդրոնական կամ թաղական մնաւուկին՝
թէ գնողը և թէ վաճառօղը, եթէ երկու կողմն ալ աղ-
դային են :

Նմանապէս այն ժառանգութեանց վրայ որք աղդային
դիւսնատանց ձեռօք վաւերանան, ժառանգելի գոյքին
արժէքին վրայ հարիւրին մէկ կը վճարեն ժառանգօղը :

Ց 9. — Դիւսնական իրաւունքը կը կայանան այլուագրու-
թեանց, ձանուցադրաց, իւստիրաց, վաւերացանց, և դրաշտահարութեան
վրայ :

Այս իրաւանց մէկ մատը կապված է վերոյիշեալ թաղա
կան ամեն իրաւանց հետ և անոնց հետ միասին կը վճարի,
նոյն իրաւանց համար վճարված գումարին վրայ զրուշին
մէկ բարայ ալ միանգամայն իբրեւ իրաւունք արձանագրու-
թեան վճարելով գիւանատան, և ասով՝ այս իրաւունքն ալ
կերպով մը ըստ կարօղութեան վճարված կը համարվի :

ՖՊ. — Բայտ կարօղութեան վճարելի իրաւունքներէն զատ
դիւանատունք՝ կեդրոնական թէ թաղական, իրաւունքներ
ալ ունին որոյ համար վճարելի գումարն որոշեալ է կանխիկէ:

ա. Կորուսեալ ո՞ր և է թուղթի մ'օրինակը հանել տալու
համար՝ որոյ իրաւունքն արդէն մէյ մը վճարեալ է, Յ զը-
րուշ վճարելու է:

բ. Որ և է թուղթի և ո՞ր և է գործի համար ուր կարօ-
ղութեան կամ գործին կարեւորութեան վրայ չափելու տե-
ղի շը կայ Յ զըրուշ վճարելու է:

գ. Գիւանատունէ մ'ելած թուղթ մը ուրիշ դիւանա-
տունէ մ'ալ վաւերացնել տալու համար, Յ զըրուշ վճարե-
լու է:

դ. Ազգային ո՞ր և է գիւանատունէ ռողիած ամենայն
թուղթ սպատօնական պիտ'որ կրէ ազգային գրոշմը որոյ
իրաւունքն է մէկ զրուշ զոր թուղթն ուղղը կը վճարէ:

ԳԱՆԳԱԼԱԿԱՆ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ

ԳԱ. — Հանգանակութեան սկզբունքը մի և նոյն են
ամեն ուրեք, և օրէնքը միօրինակ կիրաւելի ամեն գաւա-
ռաց մէջ:

Իւրաքանչիւր գաւառի մէջ գաւառագլուխ քաղաքը
կեդրոն կը կազմէ իր թաղերովը ուր բնակիչք կը հանգանակեն
գաւառական և թաղական ծախից վճարման թէ ուղղապէս

և թէ անուղղաղէս ըստ օրինաց ընդ հանուր և մասնաւոր հանդանակութեանց, և ուր թաղական մնառուկները իւրաքանչիւրն իր ընդ հանուր հանդանակութենէն յառաջ եկած բովանդակ գումարը կիսուակէս կը բաժնէ գաւառական մնառուկին հետ։ (Ճ՛մ 78 յօդ։ և հանդանակութեանց բոլոր յօդուածները)։

Նոյնպէս իւրաքանչիւր թեմ՝ քաղաք թէ գիւղ, կեղը ըստ կը կազմէ իր թաղերուն միջեւը (Եթէ ունի թաղեր), ուր բնակիչք թէ ուղղաղէս և թէ անուղղաղէս կը հանդանակեն թեմական և թաղական ծախից, և ուր թաղական մնառուկները կիսուակէս կը բաժնեն թեմական մնառուկին հետ իրենց ընդ հանուր հանդանակութեան արդիւնքը։ Եթէ չունի թաղեր և մէկ թաղ մը կայ ու մէկ մնառուկ որ միանգամայն թաղական է և թեմական, բնականապէս իրեն կը պահէ հանդանակութեան բոլոր արդիւնքը։

ԱՅ. — Թեմերը գաւառական հանդանակութեան կը մասնակցին ըստ կարօղութեան՝ իւրաքանչիւր թեմական մնառուկ իր ընդ հանուր հանդանակութեան արդեանց բովանդակ գումարին մէկ հարիւրորդը բաժին հանելով գաւառագլխին գաւառական մնառուկին։

Նմանապէս գաւառները ազգային ընդ հանուր հանդանակութեան կը մասնակցին ըստ կարօղութեան՝ իւրաքանչիւր գաւառական մնառուկ իր ընդ հանուր հանդանակութենէն յառաջ եկած բովանդակ գումարին մէկ հարիւրորդը բաժին հանելով Պօլսի կեղը ըստական մնառուկին։

Ամ այս և մի զգացոցը անմելյան բան։ Հ Յ
աւագ մնառ վիճակոցը բանվոյն զգացնեց և գայու մնառ

————— օ օ օ օ օ օ օ —————

զգացաց, ով ով բառաւ ու ք շն վ ու ու ք դ մ ա ց ա յ ո վ
մ ձ ի ս ա ն ո ւ բ ա ն ա շ ո վ ո վ զ ց ի ս ա ն ե լ ո յ ո ւ ց ո վ մ յ ա ն ե լ ո վ ո վ մ ո յ ո վ ո վ
ո վ մ ա ս ա ր ո ւ ց ա ն ե լ ո վ ո վ զ ց ի ս ա ն ե լ ո վ ո վ մ ո յ ո վ ո վ մ ա ս ա ր ո ւ ց ա ն ե լ ո վ ո վ

ԳԼՈՒԽ ՀԵՂԳԵՇՈՐԴ

ԱՏԵՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒԹ ՕՐԵՆՔ

ԺՈՂՈՎՈՅ ԵՒ ԽՈՐՀԵՐԴՈՅ

93. — Ամեն ժողովը և խորհուրդը պաշտօնաւոր անդամներ ունի որք իր ատենական դիւանը կը կազմեն :

Ժողովի մը դիւանը ընդհանրասկէս և անդամէ կը բաղկանայ . մէկ ատենապետ կամ ժողովապետ՝ երկու մոխանորդով, առաջին և երկրորդ . երկու ատենադպավիր՝ ընդհանուր և մասնաւոր, իւրաքանչիւրը մէյմէկ փոխանորդով :

Խորհուրդի մը դիւանը էն քիչ և անդամէ կը բաղկանայ . մէկ ատենապետ կամ խորհրդապետ և մէկ ատենապիր՝ իւրաքանչիւրը մէյմէկ փոխանորդով :

Բաց ի խորհրդապետներէն՝ որք իրենց պատշաճ ժողովներէն կ'ընտրվին, դիւանին միւս անդամները ամեն ժողով և խորհուրդ ինք իր մշշէն կ'ընտրէ՝ երկու տարւոյ համար, և ենօդ անդամք վերնարելի են :

94. — Դիւանները պաշտօն ունին ժողովին կամ խորհուրդին ներքին կամ առաջին կամ առաջին թիւնը խմբագրելու, աշխատութիւնները կարդադրելու, խնդրոց կարգը պատրաստելու, ըստ հարկին յանձնախառմիններ կարգելու կամ ընտրելուց ցանկ պատրաստելու, և յանուն ժողովին կամ խորհուրդին ատենական բոլոր գործերը տնօրինելու :

Ատենապետաց յատուկ պաշտօնն է՝ ատենանը բանալու վերցնել, ատենաբանից կարգով խօսք տալ, վիճաբանութիւններն ուղղել և ատենանը կառավարել ըստ կանոնադրութեան :

Ատենապետաց յատուկ պաշտօնն է՝ ատենագրութիւն-

ները խմբագրել, և քաղուածը յաշորդ նիստերուն ներկայացնել, թղթակցութիւններն ընել և ատեանին բոլոր գրուածքը հոգալ:

Այս պաշտօնաւորաց կ'օգնեն փոխանորդները, և բացակայութեան ատեն անոնց պաշտօնը կը վարեն:

80923 100 80926

95. — Ա. Ժողով թէ խորհուրդ չը՝ կրնայ օրէնստոր առեան բանալ եթէ առաջուց չ'իմացնէ իր անդամոց ամենուն ալ ըստ կանոնի հրատէրագում մը բացման տեղը, օրն ու ժամը և միանգամայն խնդրոց կարգը, և չը ստուգէ ընկալման ստորագրով թէ նոյն հրաւիրագրաց գրեթէ ամենն ալ իրենց հասցէին ժամանած են գոնէ Յ օր առաջ⁽¹⁾:

Բ. Օրինաւորութեան այս առաջին պայմանը լցվելէն ետքը, առեանը կը բայցի ճիշտ որոշեալ ժամին՝ քանի ալ ըլլայ ներկայ անդամոց թիւը. իսկ անաշառ պայման է նըմանապէս որ որոշմունքը՝ եթէ որոշում ըլլայ, հրաւիրագրաց մէջ նշանակեալ խնդրոց վրայ միայն ըլլան եթէ անդամոց մեծ մասը ներկայ չ'է. զի առանց մեծագոյն մասի նիստը՝ թէպէտ օրինաւոր, անբաւական է խնդրոց կարգէն դուրս որոշում ընելու: — Անդամք ազատ են միշտ մտիկ ընել անդամ չ'ուղելու խնդրոց կարգէն դուրս վիճաբանութիւն, եթէ դիւանին կողմէն ստիպողական հարկ չը ցուցվի:

(1) Ըստ կանոնի հրաւիրագրին առնօդ ու չը ներկայացօղ անդամները ժողովին կամ խորհուրդին համար իրաւապէս անստարերեր են ներկայ թէ բայսակայ, խնչպէս անոնց անստարեր է խնդրոց կարգը որոյ վրայ լուեցին որոշօղական ձայներնին եւ որ եւ է պատճառով չ'ուղեցին իրաւոնքնին գործածել, ուսափ բողոքի տեղի չը մնաց. ուսափ ատեանն օրինաւոր է:

Եթէ ծանուցեալ խնդրոց կարգը մէկ նիստով չը սպառի եւ նոր խնդիր չ'աւելցնելով ութօրվան մէջ ուրիշ նիստ մ'ալ հարկաւորի, նոր հրաւիրագրաց հարկ չը կայ, առաջին նիստին մէջ դիւանին կողմէն կը ծանուցի առաջին նիստին օրն ու ժամը. իսկ ութօրվան մէկ նադին ձգված նիստը կամ նոր խնդրոց կարգը հարկաւ նոր հրաւիրագրաց կը կարօտին:

Գլուխուց բանական է մնացալ յուրաքանչյուր սպառի բանական:

Գ. Ընտրութիւններէ և ամբաստանութիւններէ զատ, ամեն խնդիր օրինաւոր ատեանի մէջ՝ կանոնաւոր քննութենէ ու բաւական վիճաբանութենէ ետքը՝ ներկայ անդամոց ձայնից բացարձակ բազմութեամբը կրնայ որոշվիլ, յայտնի թէ գաղտնի քըւէով⁽¹⁾:

Դ. Եթէ Քըւէները հաւասր բաժնվին խնդրի մը վրայ, պատուակալ նախագահին գոված կողմը կը հակի որոշումը, և անոր բացակայութեանը՝ ատենապետին կողմը:

Այս պայմանները առեւական օրէնք կը կազմեն և ասոնցմով կը գոյանայ որոշման մը օրինաւորութիւնը:

Ֆ. — Ա. Ընտրութիւնները բարե անդամոց ձայնից բացարձակ բազմութեամբը կը կատարվին և բարեւէ գումար, բացականները կրնալով ըստ հարկին Քըւէնին դրկել ըստ կանոնի կնքեալ պահարանի մէջ (68) և չը զրկողները իրեւանձայն կամ անքըւէ նկատեալ ըլլալով (93 յօդ. ծանօթ.): Ուստի Եթէ Ընտրելեաց ցանկ կայ, զանի ալ անհրաժեշտ հարկ է ծրաբել հրաւիրագրաց մէջ, զի Ընտրութեանց մասին՝ Ընտրելեաց ցանկն է խնդրոց կարգը, և զի ժամանակ ունենան Ընտրօղք Ընտրելեաց վրայ տեղեկութիւն ըստանալու և դատում մը նիւթելու:

Բ. Եթէ առաջին Քըւէարկութեամբ բացարձակ բազմութիւն չը գոյանայ, երկրորդ Քըւէարկութիւնը կ'ամփոփի աւզված ընարելոց թիւին կրկինն առնված այն անուանց վըւրայ որք առջինին մէջ առաւելագոյն քըւէ ըստացան, և արդիւնքը համեմատական բազմութեամբ կ'որոշվի: — Այս Քըւէարկութիւնը ուրիշ օրի կը մնայ Եթէ նոյն օրը բոլոր ան-

(1) Բնական է որ համարաւորութեան խնդրոց մասին՝ ժողովի մէջ խօսք միայն ունենայ և ոչ քըւէ այն ժողովականն որ միանգամայն համարաւոր խորհուրդին անդամ է: — Նմանապէս իրենց վերաբերեալ խնդրոց վրայ խօսք միայն ունին ժողովի մէջ այն խորհրդականք որք միանգամայն նոյն ժողովին անդամ չ'են:

դամք ներկայ չեն, զի ժամանակ ըլլայ այս նոր ընտրելեաց
անունները անդամոց ամենուն ալ հազարդ ելու⁽¹⁾ :

Գ. Եթէ երկու ընտրելեաց վրայ քրւեից հաւասարու-
թիւն պատահի, վիճակը կ'որոշէ գրնարեալը :

Այս պայմանները (66 յօդուածին հետ յարակցապէս)
ընդունիած ընդունուած օրէնք կը կազմեն և ասոնցմով կը դպանայ
ընտրութեան մը օրինաւորութիւնը, որպէս նպեւս նմանօ-
ղապէս՝ ամբաստանութեան մը :

Դ. Իրաւունքը կը պահանջէ որ՝ ամբաստանութեան մէջ
անվստահութեան քրւեն ընտրութեան քրւեին պէս դադա-
նի և բոլոր անդամոց բացարձակ բազմութեամբը տրվի, և
ամբաստանեալ պաշտօնեայ մը չը հարկադրի ի հրաժարում
բայց նոյն ճամբէն կամ զօրութեամբ նոյն սկզբան որով հա-
սած է ի պաշտօն :

Զ. — Ընդ հանուր խորհուրդները ամսական նիստ մը
գոնէ ընելու պարտաւոր են որոշեալ օր մը պատրիարքա-
րանի մէջ կամ Պատրիարքին որոշած մէկ տեղը, իսկ ուրիշ
ատեն՝ երբ և ուր օր հարկ ու յարմար դատեն կը նատեն :

Իրաքանչիւր մասնախորհուրդ երբ և ուր օր ուղէ կը
նատէ, իսկ մասնապետք պարտաւոր են՝ առանց իսկ հրա-
ւիրագրի, գոնէ շաբաթն անդամ մը որոշեալ օր մը Պատ-
րիարքին հետ մէկտեղ դալու, թէ մասնախորհուրդոց աշ-
խատութիւնը պատրաստելու համար և թէ շարթի մէջ
ի պատրիարքարան եկած դործոց կարգադրութիւնն ու
տնօրէնութիւնն խորհրդակցութեամբ հոգալու համար :

Նոյնպէս և դատարանը պատրիարքարանի մէջ շաբաթը
մէկ օր գոնէ պարտաւորապէս բաց պէտք է մնայ :

Նմանապէս թաղական խորհուրդները ամիսն անդամ մը
գոնէ նիստ կ'ընեն իրենց խորհրդարանին մէջ, և ուրիշ
ատեն երբ և ուր ուղեն. իսկ հոգաբարձուք շաբաթն ան-

(1) Այս յետին արամագրաւթիւնը այն ընտրութեանց համար չէ
ուր ներկայացման ցանկ չը կայ :

գամ մը գոնէ եկեղեցւոյ Մեծաւորին հետ կը միանան թազին շաբաժական գործերը տնօրինելու համար :

Գ8. — Նկատելով՝ թէ անդամոց յաճախ բացակայութիւնը կրնայ անցօժարութիւն նշանակել յանձնառեալ պաշտօնին և հետեւաբար հասարակաց գործին վսասել, հրաժարեալ կը համարվի այն անդամն որ երեք նիստերու շարունակ պակսի առանց ընդունելի պատճառ յայտնելու, և ժողովը կամ խորհուրդը՝ որոյ անդամէ, կը հոգայ անոր փոխանակութիւնը ըստ Սահմանադրութեան :

ԴԻԱՆԱՑՈՒՆՔ

Գ9. — Առենական գիւաններէն դատ՝ ժողովք և խորհուրդը պաշտօնական գիւանատուն ունին իրենց հրամանին տակ և հասարակաց համար, որ բաւական գիւանադպրօք և որոշեալ ժամերու մէջ կանոնաւորապէս ամեն ատեն բացէ թէ ի պատրիարքարան և թէ թաղերու մէջ՝ կեդրանական գիւանատունը որ ի պատրիարքարան՝ կեդրունական ամեն աեսակ գրութեանց, թղթակցութեանց և արձանագրութեանց կը զբաղի, գիւանապետի մը տնօրէնութեան և պատասխանատութեան տակ, զորն որ թաղաքական խորհուրդին ընսրանոք Պատրիարքը կ'անուանէ :

Այս գիւանապետը կ'ընէ ընդհանուր ժողովին և խորհրդոց գիւանադպրութիւնը, անոնց արարքն ու որոշմունքը կ'արձանագրէ, և ազգային արձանագիրքը կը պահէ պատրիարքանի գիւանատուն մէջ :

Թաղական գիւանատունը ամեն մէկ թաղի մէջ՝ թաղական ամեն տեսակ գրաւթեանց, թղթակցութեանց և արձանագրութեանց կը զբաղի, գիւանապետի մը տնօրէնութեան և պատասխանատութեան տակ, զորն որ թաղական խորհուրդը կը կարգէ . — Այս գիւանապետը կ'ընէ թաղական ժողովին և խորհուրդին գիւանադպրութիւնը, անոնց արարքն ու որոշմունքը կ'արձանագրէ, և թաղական արձանագիրքը կը պահէ թաղին գիւանատան մէջ :

ՎԵՐՋԻՆ ԳԼՈՒԽ

ՎԱՐՍՔՆԱՌԻԹԻՒՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ

Վերջին Յօդ. Ազգային ընդհանուր ժողովն քը բէարկեալ, բարձրագոյն Դռնէն հաճեալ և կայսերական վեհավճութ կնքեալ այս Սահմանագրութիւնը՝ Հայոց ազգային վարչութեան իր օրէնդիրքն է, զոր Պատրիարքին հոգն է Ե գործ գնել և Ոզդին պարտքն է յարգել:

Ազգային սահմանագրութեան հիմնական սկզբունքն ան փոփոխելի են, բայց անոնց օրէնսդրական տրամադրութիւնը միայն՝ որք հարիւր յօդուածօք բովանդակեալ վերաքննելի են:

Եթէ կիրառութիւնը հարկաւորութիւն ցուցնէ աւելի ընդարձակութեան կամ ամբողջական բացատրութեանց զորս այս օրինական յօդուածօք չ'են կրնար պարունակել, ընդհանուր ժողովը կրնայ զայն ընել երբ որ ըլլայ՝ հետեւելով միշտ Սահմանագրութեան ափրօղ սկզբանց, և իրեւ հրահանգ յաւելուածով մը տալ զայն գործածական մանրամասնիկ յօդուածները:

Իսկ օրինական յօդուածոց վերաքննութիւնը չորս տարւոյ վերջը միայն կրնայ ըլլակ՝ եթէ այն ատեն հարկաւորութիւնը ցուցնէ ընդհանուր ժողովը, և ժողովն յատկապէս ընտրեալ վերաքննիչ յանձնախումբի մը ձեռօք:

ԲԱՇԽՈՒՄ

ՅԱԾԱԿԱՐԳԻԹԻՒՆ ԱԶԴԻՑԻՆ ԵՐԵՍՓՈԽԱՆ 13

ՀԱՏ ԲԱԺԱՆՄԱՆ ԹԱՂԻՑ ՈՒ ԳԱՒԱՌԱՅ

1.	ԿԱՐԳ . — ԵԿԵՊԵՑԱԿԱՆՔ	20
2.	ԿԱՐԳ . — ԲԻՒԶԱԱՆԴԵԱՆ ԹԱՂԱԿԱՆՔ	20
3.	ԿԱՐԳ . — ՎՈՍՔԲԵՐԵԱՆ ԹԱՂԱԿԱՆՔ	20
4.	ԿԱՐԳ . — ՀԻՒՄԱԱՅԻՆ ԳԱԼԱՌԱԿԱՆՔ	20
5.	ԿԱՐԳ . — ՀԱՐԱԽԱՅԻՆ ԳԱԼԱՌԱԿԱՆՔ	20
						100

Համեւեալ համառօտ ցուցակը յստակ կ'ընծայեցնէ բիւղանդեան և վոսքբեան թաղերն ու հիւսիսային եւ հարաւային գաւառները, եւ ըստ այն՝ երեսփոխանաց հաւասարական դասակարգութեամբ բնական բաշխումը (41), որ թէպէտ չ'է հիմնեալ ճիշտ վիճակագրութեան մը վրայ, այլ առ այժմ մերձ հաշով բաւական գոհացուցիչ, աւելի դիւրակատար, եւ գործածելի գոնէ մինչեւի նոր ու լաւագոյն տնօրէնութիւն :

ԲԱԺԱՆՈՒՄ ԹԱՂԻՑ

Ա Ա Խ Ա Տ

ԴԱՍԱԿԱՐԳՈՒԹԻՒՆՆԵՐ ԹԱՂՈԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱՅ

ԶԵԿԱՐԴ . — ԲԻՒՃԱՆԴԵԱՆՔ

ՅԵԿԱՐԴ . — ՎՈՍԲՈՐԵԱՆՔ

ԹԱՂԻՑ

ԹԱՂԻՑ

- | | |
|---|--|
| <ol style="list-style-type: none"> 1. ՔՈՒՄՔԱԲՈՒ 2. ՔՈՒՄՔԱԲՈՒ ՊՈՒՐՈԾ 3. ԿԵՄԻԿ Քաշա 4. ԵԵՆԻՔԱԲՈՒ 5. Սամաթիս Ս. ԳԵՐՈԳ 6. Սամաթիս Ս. ՅԱԿՈՊ 7. Նարլը Քաբու
(Եօնականական,
Մարտի Հեղին,
Այ Մարտին, Այ Երես) 8. Քարա ԿԵՕՄՐԻԿ 9. Պալատ 10. ԷՅՈՒՊ | <ol style="list-style-type: none"> 1. ԲԵՐԱՆ, ԴԱԼԱԹԻԱ
(Քառա՞ բաշա՞) 2. Հասգիւղ 3. ՊԵՀՀԻՇԹՈՎ 4. ՕՐԹՈՎ ՀԻՂ 5. ՀԻԽԱՐ (Քօրո՞ չէվե՞,
Մերդի ան, Մերդի ան
Նորդի և Մեծի և) 6. ՊԵՐՋՈՎ (Քառա՞ լի՞) 7. ՔՈՎԿՈՒՆՃՈՒՔ
(Խճառիկ), — ՔՊԱՐ 8. Ոմկիտար Ս. Խաչ 9. Ոմկիտար Ս. Կրպատ 10. Քաղկեդոն
(Քարենա՞ Քնառե՞ հրե՞) |
|---|--|

Այս կարգին մայր թաղը փուլը քում
քաբուի մայր եկեղեցին է, ուր
կը գումարվի Յիւղանգենան թա-

զակրոյուց (42 յօդ):

Այս կարգին մայր թաղը Ֆերախ
կամ Պալաթիոյ եկեղեցին է,
ուր կը գումարվի Վասքորեան
թաղակոյտը:

Յանձնու համար այս բառը մասնաւութիւն ունի
Յանձնու համար այս բառը մասնաւութիւն ունի
Վասքորեան հետ միացեալ թաղեր են:

ԲԱԺԱՆՈՒՄ ԳԱԽԱՌԱՑ

ԵԿ

ԴԱՍԱԿԱՐԳՈՒԹԻՒՆ ԳԱԽԱՌԱԿԱՆ ԵՐԵՄՓՈՒԱՆԱՑ

Ա Դ ԿԱՐԳ · — ՀԻՒՍԻՍԱՑԻԿԱՑ

1. Թիմակալ . էպրե . 2
(Թաւուրաւ, Աւալուսւն
Ֆէլուկ և այլն)
2. ՏԱՐԵԼՊԵՆԱՆ ՎԱԽԱԿԱՆ . 2
(Շահան, Ուստան +
Ուստանան և այլն)
3. ՊՈՆՏԱՆ . ՏՐԱՊԶՈՆ . 2
(Ախան, Աւան, Ավանան
Ավանը, Եւ Քարաճիստ և այլն)
4. ՇԵՐԱԿ . ԿԱՐՄ . 2
(Գանգան, Աւարւն, Շերակ
Վարչական, Գարագար և այլն)
5. ԲԱԿԻՋԱԿԱՆ . ԿԱՐՄ . 2
(Բայքերտ, Արեւ, Թարթառ
Երշակ, Թարթառ
Կամա, Գեղեց և այլն)
6. ՍԵԲԱԼՈՍԻԼ . ՄԵՂԱԶ . 2
(Եր Բերերւն)
7. ԱՐԱԼՈՒՅՈ . ԱՄԱՅԱԿԱՆ . 2
(Կածուր, Զիլ .
Մարտան և այլն)
8. ԳԱՂԱՍԻԼ . ԵՐԵԿԻՐԻ . 2
(Երշակ, Զորաւ և այլն)
9. ՆԻՐԱԼԻՎԻԼ . ԻՀՄԻՏ . 2
(Եր Բերերւն)
10. ՈՒԼԻՄԳԱԼԻՆ . ԱՐՈՒԱԿԱՆ . 2
(Ավանանձն, Ավալ + այլն
Ավանանձն, Զահանդաւ և այլն)

Ե Դ ԿԱՐԳ · — ՀԱՐԱԿԱՎԵՐԵԿ

1. ԶԱՐԻԲՈՒՆԻԱՆ . ԻՀՄԻՏ . 2
(Արանք, Գերման
Արքան, Արքան և այլն)
2. ԿԱՊԱԳԱՎԱԿԻԱՆ ԿԱՆԱՐԻԱՆ . 2
(Բայսա, Ակերեւ
Նիդր, Քանիս և այլն)
3. ԼԻԼԻԿԻԱՆ . ԱՏԱՆ . 2
(Ակիսան, Հազին, Աւա-
Տանան, Մերտի, Կապարան)
4. ՈՒԼԵՆԻԱՆ . ՄԱՐԱՇ . 2
(Գանգանէրտ, Բայսա, Գերման
Իլուստ, Անդան, Ուհենան
Գլուխ, Յահան, Ալուսան
Կերտի, Տերշակ և այլն)
5. ՀԱՇՏԵԱՆ . ՀԱՐԵՎԵՐԻ . 2
(Ան, Արտիկ, Տերմի
Մալանի, Զահենան
Բերեւն, Բայսա և այլն)
6. ՏԱՐՕՆ . ՄԹԵ . 2
(Պերւն, Աւերւ և այլն)
7. ՎԱՍՊՈՒԻՐԱԿԱՆԱՆ . ՎԱՆ . 2
(Եր Բերերւն)
8. ՄԻԶԱԳԵՏՏ . ՏՐԱՎԱՆԱԿԵՐՏ . 2
(Երշակ, Մերտի և այլն)
9. ԵՐՈՒԱՎԱԼԵՄ . ՎԱԶԻՄ . 2
(Ասուր և Ալազան)
10. ԵՐԻՖԾՈԱ . ՄԱՀԻՐԵ . 2
(Աւերւն և այլն)

Կամ . — Ելերագրեալ 20 գաւառները Արժեականապատճեն են, և գաւառագլուխ
ներնին՝ իրեւ առաջնորդանիստ կեղրոն գաւառական վարչութեան ասանց մէջ
պարունակեալ թեմերը որ ամենը հոս յիշանձ չեն, իրեւ Եսկանապատճեն կամ
Փափառաշնորդաբէն + բաշխի կը հարկաւորին գաւառաց մէջ ըստ յարմարու-
թեան առաջական մերձարութեանց:

— Եպահանքան 59 առքինուն քննութեան վարչութեան 2 հաստատ էնդի, հետուին և հարու-

ԸՆԴՀԱՆՈՒՐ

20

21

ՅԱԱԽՄԲ ՄԱՅՏԵՐ

թի

ՅԵՄԱԳԻՐՈՒԹՎԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՎԱՅԻՐՈՒԹՅՈՒՆ

ԿԱՅԱԽՄԲԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱ

ԿԱՅԱԽՄԲԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱ

ԴՐԱԽՄԱԿԱՎՈՐ ԽԱՎԱԲՐ

ԴՐԱԽՄԱԿԱՎՈՐ ԽԱՎԱԲՐ

ՑՈՅՐ ԸՆԴՀԱՅ Ա.

ՑՈՅՐ ԸՆԴՀԱՅ Ա.

ՄԱՐԴ ԲԱՅ Ա.

ՄԱՐԴ ԲԱՅ Ա.

ՎԵՐԱԲԵՐ ՄԱՅԻՆ ԹՎԱՅԻՐ

ՎԵՐԱԲԵՐ ՄԱՅԻՆ ԹՎԱՅԻՐ

ՎԵՐԱԲԵՐ ՄԱՅԻՆ ԹՎԱՅԻՐ

ՎԵՐԱԲԵՐ ՄԱՅԻՆ ԹՎԱՅԻՐ

ԵՐԱԿԱՆ ԵՐԱԿԱՆ

14 ՍԵՊԵMBER 1869

ՅԱՅԻՆ ԱՅԱԽՄԲԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱ

ՎՐԻՊԱԿ ՈՒՂՂԵԼԻ

12. Յօդուածին երկրորդ՝ պարբերութիւնը՝ **18.** յօդուածին՝ երկրորդ՝ պարբերութիւնը պիտի ըլլայ և կարդացվի սապէս՝ « Եւ ինք խորհրդապետը պարտաւոր է կրօնական գործոյ տարեկան ընդհանուր համարատութիւնը մատուցանել Ժողովին » :

28. Յօդուածին առաջին տողը կարդալու է սապէս՝ « Միւս մամնապետաց ընտրութեանը համար՝ որք են Ուսումնապետ, Ճնտեսապետ, Համարապետ, Պատրիարքն ու Նորընտիր » եւայլն ըստ կարդի :

47. Յօդուածին երրորդ՝ տող. փոխանակ « փոխելով » կարդա՛ « փոխվելով » :

50. Յօդուածին երկրորդ՝ տողին մէջ կարդա՛ « և Առաջնորդը՝ փոխանորդապէս Պատրիարքին՝ գաւառաբնակ օսմանցի հայոց հոգեւոր պետն է » :

53. Յօդուածին երկրորդ՝ տող. փոխանակ « ժողով մը » կարդա՛ « ժողովով մը » :

63. Յօդուածին առաջին պարբերութեան վերջը իբրև շարունակութիւն կցելու է՝ « և կամ Պատրիարքին կամ Առաջնորդին հրամանովը » :

76. Յօդուածին վերջին տողին մէջ փոխանակ՝ « պատիր » կարդա՛ « պատիւ » :

83. Յօդ. երրորդ՝ տողին մէջ « և » բառը աւելորդ է :

88. Յօդ. երրորդ՝ տողին մէջ « սակարդեալ » կարդա՛ « սակ արկեալ » :

Առաջին էջին մէջ փոխանակ « սատուածարեալ կաթողիկոսի կարդա՛ » և ԱՍԾՈՒԽԵՑԻՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ » :

ՎԱՐԴԻՆԻ բարեգի

ւրով Յ ՝ շմային բարեգի միջաւոր քայլած միջաւոր Յ ՝
ըստ քայլ և պայլ փոխ զմային բարեգի միջաւոր
ողի և դուռապայան ցառմաս քայլ գովի այ և աժրան կի
զմային բարեգայանա՞ դրամահար մայմաս պահյա ք մայմաս
* « միջային յամար տուսն

աժրան և այս քայլ պրու միջաւոր միջաւոր Յ ՝
այ մն գոյ կանա՞ զմային բարեգայանան ու միլլ և
ո մզ զայդասթ ու կայստանա՞ ու աժրան մունչ ու աժրան ու
* վրայի առց մզաւը ո դիմացըն

« լոյմիտի ա իսամայի քրու քայլած միջաւոր Յ ՝
* « լոյմիտի ա ՝ ն քայլ

Ա մ ա ՝ ն քայլ շմ միջրու քայլած միջաւոր Յ ՝ Օ Ծ
իսամաս ու ու ք մզ զայդասթ սժրու քրուստի կ քրունառ
* « ձ մումի դու ք քրու զայդանոս
* զ ի խորե ա իսամայի քրու քայլած միջաւոր Յ ՝
* « զ ի խորե ա ՝ ն քայլ

Վ ի զ ի մաս ն բարեգայան միջաւոր միջաւոր Յ ՝ Ք Ծ
նայ միզ զայդասթ նայ և ա ՝ Ձ այ մայ միյին բարեգայան ու մի
* « զ ի խորե ա մի քրունառ

այս ա իսամայի շմ միջրու միջդի միջաւոր Յ ՝ Օ Ծ
* « ա միտայ ա ՝ ն քայլ և զ ի ս

* ձ քայլմար ց ասա և ա ՝ շմ միջրու քայլած քօջ Յ ՝ Ք Ծ

ն քայլ « լոյմ քայլաս ա ՝ շմ միջրու քայլած քօջ Յ ՝ Ք Ծ

ո ն քայլ յաման ա տուսն ա իսամայի շմ միջդ միջաւոր Յ ՝
* « բամիդա քրու ո ն քայլ ո կայի յա յա

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՎԵՐԱԲԵՆԻՉՉ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻՆ

ՍԱՀՄԱՆԵԴՐՈՒԹԵԱՆ

ՏԵՂԵԿԱԲԵՐ.— ՌՈՒՍԻՆԵԱՆ ԵՖԵՆՏԻ

ԱՏԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ

28 ՕԳՈՍՏՈՒ 1870

Ի ՊԱԼԱԹԻԱ.

ବିଦ୍ୟାମନ୍ତ୍ରମଳେ

ଶ୍ରୀକଷ୍ଣାନାଥମାତ୍ରମାତ୍ର — କବିତାମାତ୍ରମାତ୍ର

ଅଧ୍ୟାତ୍ମିକମାତ୍ରମାତ୍ର

ପ୍ରକାଶକ — ଶବ୍ଦବିଜ୍ଞାନିକା — ସପ୍ତପିତ୍ତମାନ

ପ୍ରକାଶନ ବିଭାଗ ପାଠ୍ୟମାତ୍ରମାତ୍ର ମହାଶୁଦ୍ଧି

— ୧୯୫୦ ମୁଦ୍ରଣ ୧୫୦

ପ୍ରକାଶକ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՎԵՐԱՔՆՆԻՉ ՅԱՆՉՆԱԽՈՒՄԲԻՆ ՄԱՀՄԱՆԱԳԻՐՈՒԹԵՍՅՆ

ԱՌ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԸՆ ԵԲԵՍՓՈԽԱՆԱՅ

Ամենապատիւ Սրբազնն Նախադահ,

և երեսփոխան էցէնտիներ,

Վ երաքննիչ Յանձնախումբը՝ զոր ձեր վառահութեամբը
պատուեցիք, բարեբաստիկ կը համարի դինքը որ կրցաւ
այսօր իր աշխատութիւնը Զեղի ներկայացնել, միանգամայն
ցաւօք կը խոստովանի թէ այս ամենակարեւոր գործը պէտք
եղածէն աւելի ուշացաւ իրաւ, բայց ասոր պատճառները
իր կամքէն անկախ պարագաներէ ծագած ըլլալով, կորուս
ված ժամանակին պատասխանաառութեանը մէջ իր բաժ
նին համար միայն գոնէ Զեր ներօղամութիւնը կը խնդրէ :

Սահմանադրութեան վերաքննեալ օրինակը՝ տարի մը
կայ որ՝ Զեղի ներկայացուցած ըլլալէն ետքը, Զեր յանձ
նախումբը պարս կը համարի իրեն՝ Զեղի այսօր համառօտ
և ընդհանուր տեղեկութիւն մը բերել վերաքննութեան մէջ
իր բոնած ճամբուն, նկատողութեան առած կետերուն, և
հարկաւոր դատած փոփոխութեամնցը վրայ :

Բ. գոնէն զրկված ծրագիրը, և ազգին նախկին սահ
մանադրութիւններն ուշի ուշով քննելէն ետքը, բարեմաս
նութիւններ տեսաւ անոնց մէջ և ասոնց հետ փոփոխու
թեան կարօտ կետեր : Յանձնախումբը չ'էր կրնար միայն
այս կետերը մեքենապէս նշանակել ու անցնիլ, Ազգին պէտք
ըլլագութիւն այլ իրեն ինչ տեսակ սահմանադրութիւն պէտք
էր նէ զանի ունենալ էր, և կը կարծենք որ ազգային Ճո
ղոփս ալ այսպէս կը հասկնայ վերաքննութիւնը ուստի զայն
ընել կարծեց Զեր յանձնախումբը, և ահաւասիկ ինչպէս :

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԱԿՈՒԹՅՈՒՆ

Հայութիւն օքր յանձնախումբը՝ իր աշխատութեանց ընթացքին մէջ չ'էր կրնար իրեն ուրիշ յեցակետ ընտրել եթէ ոչ ընկերական ամենայն դաշտանց այն տիեզերական սկզբունքը՝ էր ու պատուանդանքը. չ'էր կրնար ուրիշ առաջնորդ բռնել իրեն եթէ ոչ այն ոգին որ ի սկզբանէ մինչեւ ցարդ տիրածէ ու կը տիրէ մեր ազգային սահմանադրութեանց մէջ, որ երես փոխանական դրութեան ոգին է, որ հաւասարութիւն կը հաստատէ ամեն ազգայնոց մէջ և օրինաւորութիւն կը պատուիրէ ազգային ամեն տնօրինութեանց մէջ:

Օքրինաւորութիւնը, ի՞նչ է օրինաւորութիւնը, եթէ ոչ հաւասարապես առնված ու աղատավեճութացայտված կարծիքը բարձր բարձր բարձր է, այսինքն մեծադարյն մասին ։ Այս կարծիքը կրնայ սիսալիլ սիսալականութենէ զերծ չ'է, բայց օրինաւոր է. և բնուովածն ալ օրինաւորութիւնն է :

Օրինաւորութեան սկիզբը Հայաստանեաց Եկեղեցւոյաւանդական սկիզբներէն է իրընեւ Յայ Բաղաց Յայ Առողջութիւնը մը ծագութիւն է Հայրապետ կամ որ Եպիսկոպոս Հայ Եկեղեցւոյ քահանայի մը ձեռնադրութեան կը համարձակի առանց ժողովուրդին հաւանութիւնն առնելու ձեռնադրելուոյն արժանաւորութեանը վրայ . երբ առքան բառը հնչվի ժողովուրդին մէջէն, հարուստի ըլլայ հնչօղ բերանը թէ ադքատի, աստիճանաւորի թէ անաստիճանի, իշխանի թէ հօվուի, հոգ չ'է, գորութիւնը նոյն է . իսկըն պրավնադործ աջը դոզդովալով ետ կը քաշվի . իսկ եթէ համարձակի եռնադրութեան՝ ընդդէմ վկայութեան ժողովրդեան, ասօրինաւոր համարեալ է նոյն ձեռնադրութիւնը Եկեղեցւոյ աջեւ :

Ահա այսօրան զօրնաւոր են հաւասարութեան և օրինաւորութեան վարժական թէ մէք Եկեղեցւոյ մէջ և այսպէս ժողովրդային է մեր Եկեղեցական վարչութիւնը և հետեւարար

Եկեղեցականէն կախեալ աշխարհամասն գործոց զննավայրուաթիւնք : կը մնայ միայն այս սկզբանց գործածութիւնը կանանի տակ առնուլ, որն որ Սահմանադրութեան գործն է և անոր գլխաւոր նպատակներէն մէկը :

Հոս կ'ըմբըռնենք ամենայն եռանդով զոր ինդիրը կ'արժէ, այն առիթը որ մեզ կը բռնագատէ երկու բառ ըսել մեծադպոյն մաս բաված ըսկզբունքին և օրինաւորութեան խնդրին վրայ, որով կարելի պիտի ըլլայ բացատրել գոնէ բառ մեծի մասին թէ ուր է Սահմանադրութեան թերին, թէ որ թերութիւնն իր մէջ և որը իրմէ դուրս բնոտելու է, և մերջապէս թէ ինչո՞ւ օրինաւորութիւնը արդիւնք չէ տուած մինչեւ ցարդ ազգին մէջ և Սահմանադրական վարչութիւնն անպատուզ մնացած :

Ժողալուրդը ամեն բանի մէջ օրինաւորութիւն կը պոռայ, օրինաւոր ժողովներ ու խարհուրդներ ունեցանք, օրինաւոր ըապէս ընտրեալ պատրիարք ու ազգային պաշտօնեաններ ունեցանք, օրինաւորապէս այսինքն մեծագոյն մասով խրնդիներ լուծեցինք, և դարձեալ հնանենք ուր էինք առաջ, և հան են այսօր ազգային գործերը ուր էին նախ քան ըդ Սահմանադրութիւնը :

Ո՞ր սահմանադրական պատրիարք ազգօգուտնոր յեշատակ մը ծփած է, ո՞ր սահմանադրական վարչութիւննոր բարեկարգութիւնն մը հաստատած է : Զատ տարիի է սահմանադրութիւնն ունինք, ազգային ուսումնարան մը չունինք մայրաքաղաքին մէջ, գոնէ անկէ առաջ ազէկ գէշ մէկ հատ մը ունէինք, ազգային պատուպարան մը հիւանդանոց անունով սահմանադրական օրերէն շատ առաջ ունինք, և վայուք տալու է թէ որ այսօր առաջինէն դէշ վիճակի մէջ չէ, դեռ ազգային հանգանակութիւնն մը չէ հաստատված : Ասս տարիէ որ երեսովունական ժողով ունինք և գեռ կը սպասենք դաւառ ական երեսպահանաց գալուստը . Սահմանադրութիւնը դաւառաց մէջ դեռ ի գործ չէ դրված, և չ'ենք իշխեք հարցնել թէ պօլսեցիք արդեօք ինչ շահեցան անոր

տասնամերայ գործածութենէն :

Այս, չուրացվիր, շօշափելի են այս չարիքը, բայց ուր արդեօք պէտք է բնտութել այս չարեաց պատճառը, զի ուր գտնենք զանի գարմանն ալ հոն պիտի տեսնենք :

Արդեօք Սահմանադրութեա՞ն մէջ է, ոչ, և ոչ իսկ օրինաւորութեան մէջ . այլ սոյն սկզբան ծուռ ըմբռոնման և գէշ գործածութեանը մէջ է ախտը, և ասոր հետեւանքն է ըստ մեծի մասին սահմանադրական վարչութեան ապար գիւն վիճակը : — Աւելի հեռին չը գնացած, գարձեալ կը կրկնենք, խօսքը հոռ անհատից վրայ չ'է, այլ ընդհանուր սկզբառնքին վրայ և անոր ծուռ կամ շիտակ ըմբռնված ըլլալուն և անոր գէշ կամ աղէկ գործածութեանը վրայ է, վերջապէս սկզբունքն է գտտածնիս և ոչ մարդիկը .

Մեծագոյն ռու . — Այս չուրացվիր, օրինաւորութիւնը ձայնից բազմութեան մէջ է և մեծագոյն մասով կը գոյանայ . չէ թէ՝ վասն զի մարդոց շատը անտխալական է և սխալականը քիչ, (գուցէ ասոր հակառակն եղած ըլլայ), այլ ուղիղն ու ճշմարիսն՝ որ ամեն խնդրի մէջ բնտովածն է, իբրեւ վիճակահանութեան միակ վաստկօղ թիւ՝ այնքան հաւանական է ձեռք բերել որքան աւելի տունակ առնվի . 10 տոմսակը անտարակոյս 10 անգամ աւելի պատեհ ունի վաստը կելու քան ըզմէկ տոմսակը . ասի բազմաւորութեան կամ մեծագոյն մասի ըսկըզբունքին նիւթական կամ թըւագիտական կողմն է . բայց օրինաւորութիւնը ուրիշ յատկութիւն մ'ալ կը պահանջէ, բարոյական այնպիսի պայման մը առանց որոյ ճշմարտութիւն ձեռք բերել յուսալը երազելու պէս է . այս էական պայմանը բազմաւորութեան ձեռնհասութիւնն է :

Ձեռնհասութիւնն . — Մեծագոյն մասը մարմինն է օրինաւորութեան, իսկ հողին ձեռնհասութեան մէջ է . Օրինակով մը՝ թէպէտ քիչ մը չափազանց՝ սաստիկ կը զարնէ աչքի այս առաջադրութեան ուղղութիւնը, ախտաբանական խընդիր մը լուծելու համար՝ մէկ բժըշկի կարծիքը աւելի ոյժ

ունի քան թէ հարիւրաւոր բժիշկ չեղող անձանց կարծիքը՝
վասն զի բժիշկը իր մասին մէջ ձեռնհասէ . նոյնպէս և պատ-
կեր մը քննադատելու կամ երկու պատկեր բաղդատելու
համար՝ մէկ պատկերհանի կարծիքը աւելի յարդ ունի քան
թէ գեղարուեստից անհմուտ հարիւրաւոր անձանց դա-
տումը . իսկ 10 պատկերհանաց կամ 10 բժշկաց մէջ 6 ին
միաբան կարծիքը անշուշտ աւելի ծանրութիւն ունի քան
ըզմիւս 4 ինը , վասն զի տասն ալ ձեռնհաս են և դէմ առ
դէմ կրնան կը ըստվիլ նոյն տեսակ ծանրութեամբ . ուստի
նժարին մէկ կողմը որքան բազմանայ ձեռնհասից թիւը ,
այնքան կ'աւելնայ ճշմարտութեան հանդիպելու հաւանա-
կանութիւնը , մինչդեռ 100 անձեռնհասից մէջ մէկ ան-
դամ իսկ չը կայ հաւանականութիւն . Յ մարդ , Յ ծառ ,
միշտ տաս կտոր բան է , բայց ոչ 10 մարդ կ'ընէ և ոչ
10 ծառ : Զուգակըութեան դրված բաներու մի և նոյն
տեսակէ ըլլալը թրւագիտական հարկաւորութիւն է . հնա
է մեծագոյն մաս ըսված սկզբունքին իսկական արժէքը .
Ուստի ներելի է հետեւցնել թէ մեծագոյն մասի օրոշումը
միշտ օրինաւոր է թէ և սխալ ըլլայ , բայց մեծագոյն մասը
կընայ ինք օրինաւորապէս կազմեալ ըլլալ երբ ձեռնհա-
սութեան պայմանը չը պարունակէ , և խնդիրը՝ թէպէտ օրի-
նաւորապէս սրոշեալ , սակայն ճշմարտապէս լուծեալ չը-
լալուն համար , իր պտուղը չը տար .

Ահա ասօր համար է որ՝ ժողովները միշտ կանոն կամ
սովորութիւն ունին մասնաւոր և յատուկ խնդիրներու հա-
մար՝ որոց լուծումը մասնաւոր հմասութիւն կը պահանջէ ,
նայս իրենց մասնաւոր դիւաններուն դրկել կամ յատուկ
յանձնախումբի մը ձեռօք յառաջագոյն վիճել ու սերտել
տալ և ապա հասուն հանել զանի յատեանը ու ժողովին ո-
րոշմանը յանձնել . ասով՝ ամեն անդամ տեղեկութիւն կրնայ
սուսանալ խնդիրին այլ և այլ մասանց փրայ , և ձեռնհասից
զանազան դատութիւնները տեսմնելով ու բազդատելով՝
բնական սրամարանութեամբ կը հանի վերջապէս ինքն ալ

իր վերջին որոշումը հեղինակել, և ինսդիբը ողիով լուծվելու հարելիութեան կը համեմ: Քանզի անկարելի է և չը կայ երբեք այնպիսի ժողով մը որոց բոլոր անդամները բոլոր խնդրոց մէջ առանց նստագոյն սերտելու, ձեռնհաս հրմտութիւն ունեցած ըլլան:

Ահա այս հարկաւոր իսնոնդ չ'ունենալուն կամ այս օդակար սովորութեանը միշտ հետեւած չըլլալուն համար է դլսուրապէս որ Ստհմանադրական վարչութիւնը էղ մը ինդիրներ չ'է կրցած որոշել կամ ուղիղ չ' լուծած, (թողթէ և ասօր հետ մէկտեղ որոշած ինսդիրներուն համարն ալ չ'է պահանջած դործադիր մարմիններէն): ուստի իր պաշտօնն ալ յամբութիւն դատապարտեալ է:

Ահա առոր համար է որ Զեր յանձնախումբը Մահմանագրութեան յօդուածոց մէջ ամեն ուր որ պաշտօնակաշլութիւն կամ վարչական հեղինակութիւն տեսած է, հոն ձեռնհասութեան պայմանը միշտ յիշել ուզած է:

Այս առաջադրութեան ծշմարտութեամբը այնքան թաշ փանցեալ է Զեր յանձնախումբը որ՝ ուզեց աւելի հեռին երթալ և մասնաւորէն ընդհանուրին ենելով կոմ' բու եւս բուն իսկ օրինաւորութեան աղքիւրը ենելով՝ այսինքն մասնաւոր ընտրութիւններէն ընդհանուր ընտրութեան, հոն ուզեց խել վործել վախտն իր արմատէն, ընտրօղութենէն սկսելով բնտել ձեռնհասութեան պայմանը:

Ծնորելեաց ձեռնհասութեանը վրոյ Մահմանագրութիւնն իր ընելիքն ըտած է, անկէ աւելին ընտրօղաց գատօղութեանը յանձնած է: իսկ ընտրօղաց ձեռնհասութեան պայմանը ճիշտ կատարեալ և արդ արտաքէս դեռ չ' որոշված Մահմանագրութեան մէջ, և ուղղողներ եղած են որ այս պայմանը հարստութեան տառիքամէն առնվիր, և դրամի կապէի բանը: Զայս կէտը ահա կը ցանկայ յանձնախումբը յատկապէս աղգ ային ժողովին լըրջամփառ ուշադրութեանը ենթարկել:

Համանական ընդունակութեան: — Ամեն մարդ կը ծնի հաւա

սարապէս մի և նոյն իրաւունքներով ու պարտիքներով, բայց ոչ ոք ծնած օրէն կարօղութիւն ունի զանոնք գործադրելու ։ Հասակ մը կայ որ կը բերէ բնականապէս զայռ կարօղութիւնը, որ ընդհանրապէս ընդունված է Յեօֆտարուոյ այսինքն Աւարեկան հասակը։ Այս հասակը ընդունված է չէ թէ մարդուո այս ինչ բարձրութեամբ մարմնապէս աճեցնալ ըլլալուն համար, այլ վասն զի բանաւորութիւն կ'ենթագրէ. և յիրաւի անդամաթզնապէս նկատելով մարդկային գործարանաց զարդացումը ընդհանրապէս այս հասակէն կ'ըսկի կատարելութեան հասնիլ և հետեւարար անսնց կենտղննական պաշտօնավարութիւնը, և այս կատարելութիւնը կը լրանաց Յ լին ատրու ոյ այսինքն 27 տարեկան հասակին յորմէ կ'ըսկըսի ընտրելիութեան պայմաննը.

Հասակը՝ լոկ նիւթական պայմանն է ձեռնհասութեան ընտրողութեան և անոր կարօղութեան մէկ մասը առաջին մասը միայն կը կազմէ. երկրորդ այսինքն լրացոցից մասը՝ մոտքի մշակութեան մէջ բնառելու է այսինքն դաստիարակութեան մէջ. Ո.Հաւասիկ անձ մը որ քըւէն ձեռքը կը ներկայանայ, այսինքն կ'ուղէ ընտրել այսակի անձ մը որ աղոգային գործոց խառնվի ու ընկերական խնդրոց մէջ վճիռացուցին այց։ Այս ընտրութեան կարօց ըլլալու համար՝ միմէ հարկաւոր չէ որ նախ ինքը գիտնաց գոնէ հարեւանցի մը թէ ի՞նչ է ազգը, ի՞նչ են իրաւունք ու դարտիք և ընկերական յարաբերութիւնք, ի՞նչ է ընդհանրութիւն և ի՞նչ է անհաշտականութիւն Չենք ուղեր ողահանջել անկէ ընկերարանութեան բարձր խնդիրներու հմտութիւն, բայց քանի որ ինքը քիչ շատ գոնէ ըստորին աստիճանի ծանօթութիւն չ'ունի այս բաներուն մէջ, ի՞նչպէս կարօղէ ճանաչել զունեցողը։

Սոստիճան մը կայ մտաւոր մշականութեան որ կը բերէ զայռ կարօղութիւնը և է ընդհանրապէս նպակնական դաստիարակութիւնը այս աստիճաննը մտաւորական պայմանն է ձեռնհասութեան ընտրողութեան և զանոր կարօղութիւնը կը լընցնէ։ Այս դրա դպրութիւնը կը լընցնէ։

Քանի որ ընտրօղութիւնը՝ ձեռնհասութեան այս երկու էական պայմաններն ամբողջ չը պարունակէ, ընդհանուր ընտրութիւնը պակասաւոր համարելի է միշտ և շատ անդամ քիչ արդիւնք սպասելու է անկէ :

Ամեն երկիրի և ամեն ընկերութեանց մէջ ուր ի գործ դրված է ընդհանուր ընտրութիւնը, անոր տուած քիչ շատ բարի արդիւնքը՝ հռն գաստիարակութեան աւելի կամ պակաս ծաւալմանը հետ բազդատելի է :

Չեռնհասութեան այս երկու պայմանները՝ որով հոգի կ'ըտանայ օրինաւորութեան մարմնը, ընդհանուր ընտրութեան կենսատու պայմաններն են, և ասոնցմէ դուրս կամ մանաւանդ ասոնց դէմ պահանջված պայմանները հարուած են մահաբեր՝ Որինաւորութեան սկզբունքին, և մեղանք ընդդէմ արդարութեան :

Չեր յանձնախում միին բուն բաղձանքն եղաւ ընդհանուր ընտրութեան պայման դնել նախնական գաստիարակութիւնը, բայց չը համարձակեցաւ, վախնալով թէ՝ այս նորոգութիւնը զանազան անտեղութեանց ու դժուարութեանց ծընունդ տայ, միայն միտքերը ապադային մէջ այս կողմը ձրկտեցնելու համար, այս խորհուրդին սերմը միայն ձգել ու զեց սահմանադրութեան մէջ որ իր ժամանակին գոնէ կարենայ բողբոջիլ ու բարդաւաճիլ, եթէ այսու ամենայնիւ Ազգային ժողովին իմաստութիւնը այսօրվընէ յարմար չը դատէ զանի ընդունիլ :

Ուստի կորութիւն գիտնալը միայն պայման դրաւ առ այժմ ու անցաւ, Ասով՝ գոնէ ընդհանուր ընտրութեան մէջ երբեմն պատճառած անտեղութեան մը առջեւն առած կ'ըլլայ, այն է՝ ուրիշի գրել տալով չուզված անուն մը դրած ըլլալու խարէութիւնը, Եւ յիրաւի լոկ գիր ճանչել ու զիր գծել գիտնալու լերկ պայմանը ասկէ զատ օդուտ մը չունի :

Բայց ո՞վ չը դիտէր այս խորհուրդին խորը՝ օրէնսդրին վերջին գիտաւորութիւնը՝ թէ ուր կուզէ համնիլ, և ով կը տարակուսի թէ կարդալ գրել գիտնալը արդեամբ իսկ և

զօրութեամբ կ'ենթաղ ըէ դաստիարակութեան աստիճան մը ,
դոնէ նախնական աստիճանը , այլ կերպով ըսենք՝ մարդկու-
թեան կամ ամեն մարդու անհրաժեշտ գիտելիքը :

Ընտրողութեան ձեռնհասութիւնը՝ փոխանակ հարըս-
տութեան՝ դաստիարակութեան երաշխաւորութեանը տակ
դնելը խիստ պահանջուր ըլլալ չ'է , և Զեր յանձնախումբը
ապահով է որ ազգային ժողովը՝ զայս պայմանը խիստ չը
դատելէն զատ , անհրաժեշտ ալ պիտի համարի , և անոր
հեղինակութենէն կը յուսայ որ՝ եթէ անսեղութիւն չը
տեսնէ , զանի այս վերաքննութեան մէջ կ'ընդունի :

Ասով ընդհանուր ընտրութիւնը իր արդար սահմանին
մէջ բերած հաստատած , իր ճշմարիտ ոյժը ձեռքը տուած
և իր բարոյական զօրութեան ամոռուր բարձրացուցած կ'ըլ-
լոյ , ընդհանուր դաստիարակութեան նոր գրդիու մը և Ազ-
գին՝ ծառայութեանց էն գեղեցիկը մատուցած կ'ըլլայ :

Այս ատեն 66 յօդուածին առաջին պարբերութիւնը սա-
պէս սրբագրել կը հարկաւորի . Ա. Հ. Հ. Հ. Տ. Տ. Շ. Շ. Շ. Շ. Շ. Շ.
և 24 դարեկան , և ընդունելի 27 դարեկան , այս որ նախական դաստիարակու-
թեան առաջ է ” :

Այս ժամանակ ընտրողը՝ փոխանակ ատեն ատեն 75 զը-
րուշով քըւէթուղթ գնելու , մէկ անգամ 30 դրուշ տալով
իւրաքանչիւրն իր թաղին դպրոցէն ուսումնագիր մը կ'առ-
նէ , և զայս գումարը թաղական մնառուկը կը շահի , որ և
արդէն իր օրինաւոր մուտքերուն կարգն է մամնաւոր համ-
գանակութեանց մէջ :

Զեր յանձնախումբը՝ երեսվուխան է ֆէնտիներ , չը կըր-
նայ իր խիղճը հանդարտել , եթէ չը մատնէ ձեր զօրու-
թեանը երկրորդ ապականիչ մը որ ոչ սակաւ վսաս կը բերէ
սահմանադրական վարչութեան , այն է համարառութեան
ու համարատութեան անհոգութիւնը : Ա. Խ. բառերը սահ-
մանադրութեան մէջ գեռ լոկ տառ մնացած են . ուր են
պաշտօնէից կողմէն ըլլալու տարեկան համարատութիւն-
ները՝ զոր սահմանադրութիւնը կը պատւիրէ , ուր են ու-

սու մնալիան, անտեսական, և ելմասական խորհրդաց համարաց տու թիւնները, երբ համարատու ու թիւն կամ գոնէ առաջարկու թիւն մը քերաւ կրօնական ժողովը, ի՞նչ դ ործեց տաս տարիե՛ ՚ի վեր, այնքան պարասւորու թիւններ դրածէ անոր վրայ սահմանադրու թիւնը:

Դանիր պատաժանատու ու թեան տակ են Ազգին առջեւ այս պաշտօնակալու թիւնները, մաս մ՝ այս պատաժանատու թիւններն և ասի խոստովանինք գոնէ զզջմամբ՝ Երեսփոխանաց Ժողովին վրայ կը ծանրանաց, ինք ալ համար հարցած չ'ունի՛ երբ տեսնէ ծառան թէ տէրն անհոգ է հաշիւ բընառելու, ի՞նչ ասոինան խնամ կը տանի իր ծառայու թեանը մէջ:

Սահմանադրու թեան արաւ գնօղները՝ պէտք էր երկու աչք բանացին, մէկը նախ իրենց վրայ, յեւայ Սահմանադրու թեան վրայ միւսը:

Վերաքնիչ յանձնախումբը իրեն յանձնախած պաշտօնին ողույն թերի չը պատասխաննելու նախանձով, բընտեղ սահմանադրու թեան մէջ այս ախտին աեղը և տեսաւ որ սահմանադրու թեան իր մէջը չ'է այլ զանի գործադրօղաց քովէ, ուստի տեղը միայն ձեզի ցուցնել իրեն պարտը կը համարի և հերիք, զի գեղն ալ հան է:

Այս ընդհանուր տեղեկութիւններէն ետքը անցնինք մասնաւորայ, Սահմանադրու թեան քանի մը գլխաւոր կետերուն և գլխոց որոց տեղեկադրութիւննը կարծառօտիւ պիտի ըլլայ:

ԱԱԱՆԱԼՈՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ ՄԱՍՆԱԴՐՈՒԹԻՒՆՔ
առ կերպանին Հորբենին 1. Այս գլխին մէջ գլխաւոր կետը երեսփոխանաց ընտրութեան կերպն եր և զանի նախ ջանաց բարեկարգել ձեր յանձնախումբը:

Այս Այս մասին մէջ անհամաձայնութիւն մը կար նախկին ստհմանադրութեանց մէջ, սա է . Պօլսի երեսփոխանք ուղղակի Պօլսեցւոց կողմէն ընդհանուր քուէարկութեամբ կ'ընարրվէին, իսկ գաւառականք՝ փոխանակ նոյնպէս գաւառացւոց ուղղակի քուէարկութեամբն ընտրվելու, անուղղակի կերպով այսինքն գաւառական ժողովոց ձեռքով կ'ընտրրվէին . Այս անհամաձայնութիւնը՝ աչքի զարկած օրէն անմիջապէս բառնալ պէտք էր, չ'էր կրնար ըլլալ օրէնք մը Պօլսեցւոց և այլ օրէնք գաւառացւոց համար . կամ պէտք էր ըսել գաւառացւոց դուք ալ Պօլսեցւոց պէս ընդհանուր քուէարկութեամբ ուղղակի ընտրեցէք ձեր երեսփոխանները, կամ Պօլսեցւոց օրէնքը փոխել զանազան խոհանութեան ապահովութիւններ կը ծագին անյաղթելի, թողունք մէկիդի այս դժուարութիւնները, գանք իրաւունքի մասին . եթէ իրաւունք ունի անհատ մը գաւառացի թէ Պօլսեցի, անմիջապէս ինք ընտրելու իր ազգային երեսփոխաննը, ինչո՞ւ իրաւունք չունենայ ազգին Պատրիարքն ալ ուղղակի ինք ընտրելու, ազգային Սահմանադրութիւնն ալ ուղղակի ինք վճռելու, ազգային հանդանակութիւնն ալ ինք քուէարկելու, ազգին ամեն պաշտօնաւորներն ալ իւր քուէովը ցուցնելու, և մինչեւ ուր կարելի է իրաւապէս դադարեցնել այս իրաւունքը չենք կրնար գուշակել : Սառնք իրաւ իր իրաւունքն են, գործին տէրն է, ամեն բանի մէջ ձայն ունի անժխտելի է . բայց ժխտելի մասը սա հարցման մէջ է թէ՝ արդեօք այս ձայնը ուղղակի այսինք առանց միջնորդի պիտի հանէ ամեն տեղ և ամեն գործի մէջ, թէ միջնորդապէս Երբ անհատը առանց միջնորդի ամեն գործի մէջ ձայն հանել ըսկըսի, անկարգութեան ու անիշխանութեան յառաջարանն է, օրինաւոր հաստատութեանց կործանում կը գուշակի :

Անհատներ՝ անժողովներ՝ բազմութեամբ մեծաժիւ ըլլալնուն համար է որ անոնց պատղամաւորութեամբ խօսելու հարկաւորութիւնը՝ ընկերական բարեկարդութեանց

Հիմնական և անկոնօրինելի պայմանն եղած է . և հո՞ս է իս .
կրտպէս երեսփոխանական դրութեան էութիւնը . Աւստի
Սահմանադրութիւնը ամեն մեկ անհատէ չը՝ պահանջեր աղ .
գային երեսփոխանը , այլ աղին կը պահանջէ ու ը որ ազգը
խումբ խումբ պաշտօնապէս ներկայացեալ է . Ա՞ր է ազգը
Պօլի մէջ . — Ամեն տեղ թաղերա մէջ է , և թաղին ան .
համբները պաշտօնապէս կը ներկայանան թաղական ժողո .
վով . թաղին հետ գործ ունեցողը՝ թաղին ամեն անհատ .
ներուն հետ չը կրնայ խօսիլ , հարկաւ թաղը ներկայացնող
մարմանըն հետ պիտի խօսի . նմանապէս թաղին անհատ .
ները իրենց ժպանին թերնովը պիտի խօսին զազգը ներկա .
յացնող մարմանըն հետ : Ա՞ր է ազգը դաւառներու մէջ .
— Հո՞ն ալ դարձեալ թաղերա մէջ է , բայց դաւառոց թա .
ղերն ալ դարձեալ հո՞ն դաւառական ժողովներու մէջ պաշ .
տօնապէս ներկայացեալ են : Աւստի Սահմանադրութիւնը
կամ այս ժողովները կը կազմէ ամեն տեղ անհատին քըւե .
ովիլ , և յետոյ՝ Պօլի մէջ թաղական ժողովներէն և դաւա .
ռոց մէջ դաւառական ժողովներէն կը խնդրէ ազգային ե .
րեսփոխանները : Անհատը՝ որ միշտ թաղի մը մէջ ընտիեալ
է ու ը որ ըբբոյ . Թաղական դործոց մէջ ուղղակի ձայն ու .
նի : Այն եկեղեցւոյն մէջ ու ը ինք կ'ալոօթէ , ոյն դպրոցին
մէջ ու ը յատկապէս իր զաւկները կը կըմվին , այն թաղին
մէջ ու ը ամեն կերպով ինք միշտ է հանգանակօղ , ուղղա .
կի է իրաւունքը . և եթէ ընդհանուր ընտրութեան ան .
ժըստելի իրաւունք մը կայ անհատին համար , անի թաղա .
կան ընտրութեանց մէջ է և անով կը ներկայանայ անմիջ .
նարգապէս թաղական ժողովին մէջ , և հո՞ն է իր ուղղակի ե .
րեսփոխանը , իր անմիջնորդական պատգամուորը . ընդհա .
նուր ժողովին մէջինները պաշտօնապէս ազգային երեսփո .
խաններ են , որոնք աղ անհատ չեն ներկայացներ այլ ուղ .
ղակի պաշտօնապէս ժողովներ և հետեւ արար անհատներ ,
զի այն ժողովներն ալ անհաններէ ընտրեալ են :

Այս կերպով՝ ազգային երեսփոխանք աւելի զատկալ կը

Համարվին, զիրենք ընսպիզներն առ ընարեալ են, և իրենք՝
ընտրելուց ընտրեալն են։ Չեր յանձնախումբը այս մասին երկար քննամթիւն ընել
էն ետքը՝ կը կարծէ որ չը պատիր հաստատելով թէ հա-
մեննեւին անհառին իրաւունքը վիրաւորեալ չ' և իրա-
ւունք ու պարսիք վայելչապէս իրար գրկած են. ուստի
խնդիրը պարզ և գործածութիւնը նոյնպէս պարզ տեսնե-
լով՝ և ազդին աւելի օգտակար ու արդիւնաւոր, որովհե-
տեւ ընտրօղաց ձեռնհասութեան աւելի բարոյսկան երաշ-
խաւորութիւն կայ, կը յուսաց որ ժողովին հաւանութիւնը
կ'ըստանայ այս մասին։

Տ. — Երկրորդ փոփախաւթիւն մը երեսփոխանաց 140 թիւ-
ւին վրայ է, զոր Դրան Յանձնախումբը 70 ի իջուցած է։
Առջինը շատ է և եաքինը չափազանց քիչ։ Յիբաւի թիւը
իրաւունքի մը վրայ հիմնեալ չ'է, կամացին է. ընտրօղաց թիւ-
ւին համեմատ կրնաց հաղարէն մինչեւ մէկ միլիօնի վրայ մէկ
երեսփոխան առնվիլ. և ըստ որում կամացին է, ինչ հարկ
որոշել մէկ մեզի համար քանի հաղարին մէկ երեսփոխան
աւոնուլ պէտք է։ Սակայն վերաքննիչ յանձնախումբը կը
կարծէ որ՝ այս պատկառելի ժողովը ըստ արժանություն և ըստ
բարականություն բովանդակ Սզգը ներկայացնելու համար, չ'
կրնաց 100 էն պակաս անդ ամով բաղկանալ. և մեր ազգա-
յին ժողովներու մէջ եկեղեցականաց ու աշխարհականաց
ճիշտ և արդար համեմատութիւնը՝ էն շատ Յին մէկ և էն
քիչ Յին մէկ պէտք է որ ըլլայ. ասկէ եւել կամ պակառ
չափաղանցութիւն կ'ըլլայ իրարու վրայ. Ուստի երեսփոխա-
նաց թիւը կամ 100 պիտի ըլլար՝ 20 եկեղեցական և 80 աշ-
խարհականով, կամ 120՝ 20 եկեղեցական և 100 աշխարհա-
կանով ։) Առաջինը բաւական կը կարծէ յանձնախումբը ։

(.) 100 թիւն ալ երեսփոխանաց դասակարգութիւնը չ'էր Կրո-
նար աւրել ասոնք միշտ Յ դասի բաժանեալ կը մնացին՝ Եկեղեցական
դասը 20 աւոր, և աշխարհական 4 դասերը 25 ական. քանզի

Ժողովին քանի մը տարւոյ վերջը բոլորովին լուծումը
մերժեց ձեր յանձնախումբը, զանազան անտեղութիւններ
նախատեսելով այն կերպին մէջ, և 2 տարին անդամ մը մէկ
հինգերորդով մասնակի վերանորոգումը նախապատիւ հա-
մարեց ամեն ո՞ր և է կերպի : Այս կերպով՝ աղջը ո՞չ մէկ ա-
ռեն առանց ընդհանուր ժողովի կրնայ մնալ :

Այս գլխէն դուրս չ'ելած՝ 43 յօդուածին վերջին պար-
բերութիւնը ձեր դիտողութեանը յատկապէս ենթարկել կը-
ցանկայ յանձնախումբը : — Բ. Դոնէն դրկված ծրադրին մէջ
ըսված է թէ՝ ժողովին ամեն առաջին բացմանը համար Բ.
Դոնէն հրաման առնվի ու յետոյ բացվի :

Ձեր յանձնախումբը կը կարծէ թէ զայս յօդուածը այս
կերպով աղջը չ'էր կրնար ընդունիլ առանց ցաւ կրելու իր
հաւատարիմ հպատակութեան զդացմանցը մէջ : Ասի Դրան
կողմէն անվատահութիւն կրնայ ենթադրել աղջային ժողովին
ու աղջին պատրիարքին վրայ, որոնք իր վատահութեամբն ու
հաւանութեամբը կարդեալ են. և չը կրնայ խորհվել որ ասոնք
Տէրութեան անհաճոյ ընթայքի մը մէջ դավին, ընդհակառա-
կը՝ աղջային ժողովոց դումարումները միշտ շնորհապարտ
զդացումներով են այն տէրութեան համար որոյ շնորհիւը Ող-
դը կը վայելէ իր սահմանադրական վարչութիւնը և որումա-
մեն առիթներու մէջ իր երախտապարտութեան հաւաստիքը
հոչակերու զանցառութիւն չ'է ըրած : և մանաւանդ նկա-
տելով՝ թէ ժողովին նիստերուն հրապարակային ըլլակը
ինքնին ըստ ամենայնի բաւական երաշխաւորութիւն է կա-

որ եւ ըլլայ աշխարհականաց թիւք՝ միշտ երկու հաւասար բաժին
ընելու է, կէար Պօլսի եւ կէսը գաւառաց տալով, եւ իւրաքանչիւր
կէսը հաւասարապէս երկուքի բաժանելի ըստ բնական բաժանման
թաղից ու գաւառաց (տես 41 յօդ. Սահմ) : — Այս առեն՝ գաւառա-
կան ժողովներն ալ սոյն համեմատութեան հետեւիլ կը պար-
տէին 60 անդամով՝ որով 10ը եկեղեցական եւ 50ը աշխարհական,
եւ նոյն դասակարգութեամբ :

ռավարութեան, Աղքը երբէք չը կրնար ընդունիլ եր վրայ այդպիսի կասկած։ Իսկ աղքային վարչութիւնը քաղաքաւ վարական փափուկ պարտ մ'ունի կատարելու, այն է՝ Բ. Դրան ժանօթութիւն միայն տալ ժողովին բացումն ու պատճառն իմացնելով։ և այնու հետեւ ժողովը համարձակագույն կընայ բացվիլ առանց հրաման սպասելու։ Ուստի այս պարբերութիւնն ալ սոյն իմաստին համեմատ սրբագրվեցաւ։

Յ. — Յանձնախումբը՝ չէ թէ նոր բան մ'ըրած ըլլալու համար, այլ պաշտօնին մէջ ալ շփոթութեան տեղի չը ձգելու համար։ Ճարակ և իրահարր բառերուն նշանակութիւնը ճշշտեց, և առաջուց կրօնական և Քաղաքական ժողով կոչվածները իրահարր անուանեց։ Նկատելով թէ ժողովը ըստվածք միշտ համարառու, դատող, վճռող, հրամայող մարմին մին է՝ առանց մատակարար ու գործադիր ըլլալու։ մինչդեռ խորհուրդ ըսվածը՝ ասոնց հետ մէկտեղ և գլխաւորագիւն մատակարար ու գործադիր է։ Ժողովները իրենց ընտրած խորհուրդներուն համարառու, և խորհուրդները զիրենք ընտրող ժողովներուն համարառու։

Յ. — Խորհուրդները յատուկ մասնախորհուրդներու բաժնեց ըստ յատուկ բաժանման իրենց պաշտօնին մասանց, որոց ամեն մէկ ճիւղը յատուկ ձեռնհասութիւն կը պահանջէր։ Այս բաժանումն ու կազմութիւնը պարզ ու որոշ կը աեմին խորհրդոց վերաբերեալ յօդուածոց մէջ։

Յ. — Պատրիարքի վերաբերեալ Յ. յօդուածին առաջին պարբերութեան մէջ, որ ըսված էր՝ “Պատրիարքը (Սամանցի) հայոց պաշտօնական հոգեւոր պետն է” աւելցուցինք ։ Իրեւեւ ներկայացուցիչ կաթողիկոսին ամենայն հայոց բառերը։ Առանց այս որբաղը ըստթեան բանը սիսալ ուստի և խօսքը իւելիր, վասն զի Պատրիարքը՝ յամանցի Հայոց աշխողի կողին մէջ մուլիկուրը՝ յիտևացի հայոց Երուապէնայ ապարիարքը Ափրիկեցի հայոց, և առաջնորդ սերը՝ դաւաւացոց հոգեւոր պետը չ'են։ Աղքը շատ մը հոգեւոր զլու խներ չ'ունի սոյլ ամենայն հայոց միակ հոգեւոր պետը Արարաւեան մայր ա

թոռոյ դահակալն է . եթէ Պատրիարքը Յամանցի հայոց պետ կը նկատվի՝ փոխանորդաբար կաթողիկոսին է , եթէ առաջնորդները դաւառացյաց հոգեւոր պետն են՝ փախանորդաբար պատրիարքին են , որ կաթողիկոսին ներկայացուցիչը կը համարվի կայսերական հոգին վրայ . ուստի կաթողիկոսն է դարձեալ բողոր ազգին և ամեն տեղի հայոց միակ հոգեւոր պետը , և պատրիարքները զանի հոգեւորապէս կը ներկայացնեն իրենց գտնված տեղերը : Ուստի եթէ այս սրբագրութիւնը չ'ըլլայ , օտանանցի հայերը մայր աթոռին հոգեւոր պետութիւնը ժխտած կը թըւին :

6. — Նմանապէս 4^ր յօդուածին երկրորդ պարբերութեան ետքը՝ սա պարբերութիւնը աւելցնել յարմար դասեցինք : « Սուլթանը կայսերական հրովարտակով կը հաստատէ Պատրիարքին ընտրութիւնը , և կաթողիկոսն իր առաքելական օրհնաբեր կոնդակով զանի կը նուիրագործէ » :

Ասի դարձեալ փափուկ քաղաքավարութեան պարտմըն է ազգային վարչութեան կողմէն առ Սրբազնն կաթողիկոսը . երբ վարչութիւնը ազգին նոր պատրիարք մը հաստատէ , վայելուչ է որ ամենայն հայոց կաթողիկոսին ծանօթութիւն տայ և անոր օրհնութիւնը ինդրէ . ասի քաղաքականապէս վաւերացում ըսել չ'է ամենեւին նորընափր պատրիարքին ընտրութեան , այլ հոգեւոր հաճոյացում մը որ անհրաժեշտ պայման չ'ենթագրեր . Ազգը կ'ընտրէ , աշխարհական պետը կը հաստատէ , հոգեւոր պետը կ'օրհնէ . ինչ աւելի բնական քան զայս : Այս քաղաքավար սովորութիւնը առաջուց կար , Պատրիարքարքունք իմաց կամաք միշտ երազելուանին և կաթողիկոսը օրհնութեան կրնդ ուշեր գրեկեր բայց որ եւ է քաղաքական նկատումներով գուցէ խափանմբեր էսպասավորութիւնը բացց այսօր պատճառ մը չը կայ այս ըստ ամենայնի անվասա և հոգեւոր ու քարեկամական յարաբերութիւնը կարելու մայր Աթոռին ու Պատրիարքարանին մէջ : կը տեսնենք որ Սահմանագրութիւնը տեղ տեղ

Հոգեւոր խնդրոց համար մայր Աթոռին ձեռնհասութեանը կը դիմէ . գործոց յարաբերութիւնը կարված չ'ըլլալէն ետք՝ քաղաքավարական յարաբերութիւնը պարտ կը մնայ վարչութեան : Եւ այս ձեւով ալ ետքի օրերս կաթողիկոսին յայտնել ուզած պահանջմանց կարելի հասուցումը ազգը ըրած կը սեպմի :

Ա , Թաղական մատակարարութիւննեւ : Այս մատակարարութիւնը մինչեւ այսօր անճոռնի վիճակի մը մէջ է . մատակարար խորհուրդ մը կայ , համարառու չ'ունի . կեդրոնական խոր . հուրդները անկէ համար պահանջելու իրաւունք չունին , ընտրօղն իրենք չ'են , թաղին ծախքը վճարողն իրենք չ'են : Այս իրաւունքը թաղեցւոյն է որոնք ընտրօղ ու հանգանակող են , բայց թաղեցիք առանձին առանձին անհատներ են , կերպարաննեալ և պաշտօնապէս ներկայացեալ մարմին մը չ'են , ու ասի ո՞ր տեսնված և ի՞նչպէս կարելի է որ հարիւրաւոր կամ հաղարաւոր անհատներ մէկուեղ դալով կանոնաւոր և օրինաւոր հաջիւ առնեն :

Զերյանձնախումբը տեսաւ որ պար ամենամեծ թերութիւն մըն էր , թաղական մատակարարութիւնը ձեռնք մըն էր որ կը գործէր առանց գլխի , վերջապէս հրէշ մը անդը . լուի : Ուստի . փութաց այն գլուխը աեզզը բերել , ու հասաւաեց թաղական ժողովները՝ ընտրօղ և համարառու թաղական մատակարարութեանց , և վերջապէս ըստ ամենայնի թաղը ներկայացնող մարմին մը որում կ'ընկնի նաև ամենայն իրաւամբ թաղէն ուղված աղդային երեսփոխանաց ընտրութիւնը , վասն զի պաշտօնապէս թաղը կը ներկայացնէ , և թաղին ընդհանուր գործոց հոգը՝ թաղեցւոց կողմէն իրեն յանձնեալ իրաւունքն է :

Ա , Աղքային հանդաւականնեւ : — Ազգային այս մեծ խնդիրը բաւական և շատուց ի վեր ծեծված է բնդհանուր ժողովին առջեւ , բայց միշտ պարզիւն ելած է իր պայքարը ներէն :

Զերյանձնախումբը՝ այս խնդիրին օրէնսդրական մասը հան-

Դերձ իր ընդհանուր տկզբունքովը ամփոփ ու համառօտ բռվանդակելով, և սրտի մասօք քննել ու խնդրին թերին ու գէմը ամենայն զգուշութեամբ կշռադատելէն ետքը, վերջապէս համոզված է՝ թէ ազդին արդի վիճակին յարմար առայժմ ասկէ արդար և ասկէ դիւրին միջոց չը կայ և չ'է գտած։ Դրան յանձնախումբը իսկ համոզված կ'երեւայ թէ սոսրագրութեան միջոցէն աւելի բանաւոր միջոց չը կայ առ այժմ հանգանակութեան։

Ուստի ձեր յանձնախումբը յատկապէս կ'առաջարկէ որ՝ այս խնդրին համար վիճարանութեան կորուալված ժամանակները բաւական համարվելով՝ առ այժմ այս միջոցով ձեռնարկութիւնն ըլլայ գործին և մէյ մը գոնէ հաստատված ըլլայ օրինաւոր հանգանակութիւնը։ Ետքերը փորձը կընայ ցուցնել թէ ի՞նչ և ուր վոփոխելի կետեր կան։

Փ. — Գլխաւոր փոփոխութիւնն մը ատենական օրինաց մէջ առանց մեծագոյն մասի սպասելու ատեան բանալու խնդրին է։ Այս կէտը գժբաղդապէս շատ մը ժամկադին փորձերով իմացուց մեզի թէ ի՞նչ անտեղութիւններ կան մեծագոյն մասի ըսպասելու մէջ։

Զեր յանձնախումբը համոզված է՝ թէ այս խնդրին ալ առանց բնաւ իրաւունքը վիրաւորելու, իր արժանի բարեձեւութիւնը գտած է 95 յօդուածին և անոր ծանօթութեանը մէջ։

ԱՊ. — Գաւառական վարչութեան գլխին մէջ ըսելիք չը կայ։ ասի կեդրոնական վարչութեան վրայ ձեւեալ է և ըստ այն կը վարվի ամենեւին։ Միայն թէ անդամոց թիւը՝ որ միշտ և մինչեւ հիմայ անորոշ էր մնացած, որոշել հարկաւոր դատեց յանձնախումբը, և ընդհանուր ժողովին համեմատութեամբ որն որ 400 անդամ ունի, 50՝ գաւառական ժողովոց յարմար համարեց, և 25՝ թեմական և ժանդական ժողովոց։

ՎԵՐՋԱԲԱՐԵ

Փոփոխելու արժան դատած գլխաւոր կետերուն վրայ
ար մասնաւոր ու համառօտ տեղեկութիւնը տալէն ետքը՝
~~Ձեզ~~ յանձնախումբը իր աշխատութիւնն աւարտած համա-
րելով, սա հետեւեալ երկու գլխաւոր առաջարկութիւննե-
րով կը կնքէ իր տեղեկագիրը:

Առ սժառարկութեան. — Նաև՝ կ'առաջարկէ որ թաղական
մատակարարութեան գլուխը՝ իրք ըստիպօղական խնդիր ա-
մենէն առաջ ընդունի լնդհանուր ժողովը և հիմակվլնէ
արտօնութիւն տայ վարչութեան որ թաղական ժողովնե-
րուն կազմութեան հրահանգը զըկէ թաղական խորհը-
դոյ. Նկատելով՝ թէ այս թերութիւնը տեսնված ժա-
մէն աններելի է բաց թուգուլ, վասն զի ասի ազգոյին ամեն
գործօղութեանց հիմն ու ազբիւրն է. Նկատելով գարձեալ
թէ թաղական մատակարարութեան պարագաները ամենե-
ւին Բ. Դրան ուշադրութիւնը չ'են կրնար գրաւել, ասի բուն
իսկ ազգին ներքին և գրեթէ ընտանեկան պարզ մէկ գործն
է, իրքեւ Եկեղեցւոյ մէջ ըլլալիք գործօղութիւն մը, եկե-
ղեցւոյ և գործոցի վերաբերեալ սոսկ մատակարարութիւն
մը. ի՞նչ կերպով ալ ըլլաց հառավարութեան հոգ չ'է:

Երկրորդ՝ սոյն առաջին առաջարկութեան կը կցէ նաև
իրքեւ երկրորդ կամ լրական մաս՝ հանդանակութեան գլուխը,
և կ'առաջարկէ որ այս երկու գլուխները՝ իրքեւ իրարու շո-
րունակութիւն, իրարմէ չը զատելով, ըստիպօղական խնդրոց
առաջին կարգը գասէ ու վճռէ լնդհանուր ժողովը. Նկա-
տելով նաև՝ թէ հանգանակութիւնն ալ թաղական մատա-
կարարութեան պէս Բ. Դրան հետ յարաբերութիւն չ'ունի,
նոյնպէս թաղական ներքին գործօղութիւն մըն է և նոյն
մատակարարութեան մէկ մասը. Նկատելով գարձեալ՝ թէ
Ողդը անյապաղելի պիտոյքներ ունի ասովլ լցնելու, օրինա-
ւոր հանդանակութեան մը առաջին անգամ հաստատու-
թեանը կարօտ է՝ ժամանակին ու փորձին յանձնելով անոր
թերութեանց ուղղութիւնը, մանաւանդ խնդիր մը որ յա-

ւիտեան կրնայ ասդին անդին քաշկուտվիլ, և որ ոչ մեկ ընօ^ւ
կերութեան մէջ կրցած է գեռ այսօր հասնիլ ամենակա^ւ
տար դրութեան մը:

Չոր եւ գերջն պահանգութիւն։ — Ձեր յանձնախումբը կ'առա^ւ
ջարկէ որ Աղբային ժողովը իր իմաստուն գիտողութիւննեւ^ւ
բովը անոր թերութիւնները լցնելով, օր մը առաջ և ամ^ւ
բողջապէս ընդունի Պայտ վերաքննութիւնը ։ Նկատելով որ
նախնի սահմանադրութեանց հետ բազդատելով, 40 տար-^ւ
ոյ մէջ քիչ յառաջադիմութիւն չ'է ըրած այս նորը թէ
դաղափարներու մասին և թէ դործադրական մասին ։ ուր
ամեն իրաւունք ու պարտիք ըստ կարի տեղերնին գտած
ըլլալով՝ համաձայն ներդաշնակութեան մէջ կը թըւին ։ ուր
սահմանադրական վարչութեան կաղմաւորութիւնը բաւա-^ւ
կան դոհացուցիչ կերպարան մ'առած կ'երեւայ։

Չեր յանձնախումբը չ'է երբէք մոքէն անցուցած թէ այս
վերաքննութիւնը թերութիւններ չ'ունի, հեռի իրմէ այդ
յաւակնութիւնը ընդ հակառակը՝ համոզված է որ դեռ շատ
բարեձեւութիւնները ու դործադրական դիւրին միջոցներ
կան ու պիտի յառաջ դան, և մենէ ետքը եկողները մեր
շատ թերութիւնները պիտի լցնեն ։ և վերաքննութենէ ի
վերաքննութիւն անցնելով՝ ժամանակին ու դաղափարաց
յեղաշըրջութեանը հետ պիտի կատարելագործի և վերջա-^ւ
պէս պիտի կարենայ օր մը այս սահմանադրութիւնը՝ ազգա-^ւ
յին զեղծմանց բարձիչ, և բարեկարգութեանց միջորդն ըլ-^ւ
լալ, աղդային բարոյական ու մոռագրական յառաջադիմու-^ւ
թեանց ցանկալի առաջնորդն ու աղդին սիրելի օրէնդիրքը
հանդիսանալ ։ Աս' է Աղդին և ամեննուս ակնկալութիւնը, և
Պայտ ակնկալութիւնը Աղդն իր երեսփոխան Ժողովին վրայ-^ւ
դրած է, և անսը պիտի սրաբաի այս նորհը ։ Այո, Զեղի՛,
Երեսփոխան Լֆէնտիններ, որ այնքան երկանք ծնաք Յահ-^ւ
մանագրութիւնը ու զանի այնքան խնամով շըրջապատե-^ւ
ցիք, և միանգամայն կայսերական կառավարութեան որ
նորհ ըրաւ անոր կեանք պարգեւելու ։



13354

2013

«Ազգային գրադարան»



NL0046574



Մարզեա պետական